№ 74 ՇԱԲԱԹ, 11 ԱՊՐԻԼԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ԱՊՐԻԼԻ № 74

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՐՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։

ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Ցայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, օրինք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կունենան 10 թ. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրեմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Տանջվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դիպուվածներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հովանաւորութեան ներքոյ գտնվող ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ,

ընդունած լինելով էջմիածնի համաժողովի որոշումները՝ փախստական-գաղթականներին օգնելու մասին և նրա մշակած գործունէութեան ծրագիրն ամբողջովին, առանց օրէք վերապահումների, շարունակում է ընդունել նուիրատուութիւններ վերոյիշեալ ծրագիրն իրագործելու նպատակով։

Նուէրները կարելի է ուղղել 1) Ընկերութեան նախագահին (Тифлисъ, Хану Сагнакскому). 2) Ընկերութեան գանձապահին (Тифлисъ, Юльѣ Спендіаровой—Евангуловская, 8) և 3) «Մշակի» խմբագրութեան անունով (Редакція газеты «МШАКЪ» для передачи «ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑՔՍ»).

առ. (օ. մ.) 197. 5—5

Ամարային Ժողովրդական Թատրոն

(Հալաքարի Հասարակական Ակումբի ամարային շէնք, բժ. Կարապետեանի այգի, Միքայէլեան փողոց № 65).

Կիրակի, ապրիլի 12-ին

✦ ՍԻԶՕՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ ✦

✦ Ներկայացում երեք լեզուով ✦

ՀԱՅԵՐԷՆԸ՝ **„ՄՕՑԻՔՈՒԼ“** 2 գործ.

ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ—«ԿՈՎ ԿԱՍԻ ՆՈՒԱՃԻՄԸ»

Մասնակցութեամբ դերասան ՇԱՀԽԱԹՈՒՆՈՒ

Սկիզբը երեկոյեան ժամը 7½-ին ✦ Այդօրվա կարելի է զբօսնել ժամը 6-ից։

Տեղերի գները մուտքի հետ միասին 25-ից մինչև 80 կոպէկ։

առ. 226. 2—1 Կարգադրիչ՝ Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

Մոսկվայի համալսարանի
ՊՐՕՖԵՍՍՕՐ
Ի. Խ. ԶԻՐՆԷ

ընդունում է վիրաբուժական հիւանդութիւնների համար ամեն օր՝ ժամը 4—5-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից։ Старая Бебутовская ул., № 58, տ. բժ. Մկրտչեանցի։

(և. շ.) առ. 208. 3—2

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

«Մշակի» այսօրվայ համարում տրվում ենք հայկական ազգային պատգամաւորութեան պետ Պօղոս փաշա Նուպարի շրջաբերական կոչն, ուղղված երկրագնդի վրա գտնվող ամբողջ հայութեան, որով, յայտնելով թէ ազգային շահերի պաշտպանութեան գործի համար մի յատուկ հանգանակիչ յանձնաժողով է կազմվել իր նախագահութեամբ, հրաւիրում է բոլոր հայերին մասնակցել այդ մեծ հանգանակութեան։

Մինչ այդ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որի նախագահն է Պօղոս փաշան, բացել էր հանգանակութիւն յօգուտ հայ փախստական-գաղթականների և այդ հանգանակութեան արդիւնքից ևս 60,000 ր. ուղարկված է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, սակայն այդ հանգանակութիւնը այժմ փակվել է և ձեռնարկված է նոր, ընդհանրական, համազգային մի հանգանակութեան յօգուտ յաղթանակի այն դատի, որի պաշտպանութիւնը եւրոպական մեծ պետութիւնների առաջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը յանձնել էր Պօղոս փաշային, այն է՝ Թիւրքիայի հայ ժողովրդի իրաւունքների և վիճակի բարւոքման հարցի պաշտպանութիւնը։

Այդ դատի աջողութեան համար պահանջվում է, ինչպէս գրում է Նուպար փաշան, անխորտակէս բոլոր հայերի համագործակցութիւնը պատմական այն մեծ րոպէին, երբ մեր ազգի ապագան խնդրի նիւթ է և նրա ճակատագիրն ևս պէտք է վճռվի։

«Մշակը», որ միշտ իր աջակցութիւնն է տուել Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, որի խմբագիրը այժմ ևս, իբրև լիազօր ներկայացուցիչ նրա նախագահի, հրաւիրված է աջակցել այդ հանգանակութեան, իր բարոյական և ազգային պարտքն է նկատում յորդոր կարդալ իր ընթերցողներին և Ռուսատանի հայ ժողովրդին՝ արձագանք տալ Նուպար փաշայի համազգային ձեռնարկին, այն դատի յաղթանակի համար, որի լուծման համար այնքան աշխատեց ռուսաց մեծազօր կառավարութիւնը և որը պէտք է պսակվի ռուսական զէնքի և զօրքի յաղթանակով։

«Մշակը» պատրաստ է յօժարակամ նուէրները հասցնել իր տեղը։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ազգային Կենտրոնական Բիւրօ Դիարբէքիրից, ապրիլի 8-ից, ստացել է հետևեալ հեռագիրը.

Այսօր առաւօտեան Դիարբէքիր եկած 23 տղամարդ, որոնք փախել ազատվել են Արճէշից, մեկնած մի նաւակով, պատմում են, որ Թիւրքական իշխանութիւնների կարգադրութեամբ վինտորական դիրքերից հրացանազարկ են եղել և չարդի ենթարկվել տեղական բոլոր հայերը։

Թիւրքերը նրանց հաղորդել են, որ տեղի են ունենում ընդհարումներ մուսուլմանների և հայերի միջև, Վանում հայկական կոտորած է, իսկ Արամ-փաշա Արամեանն էլ կախաղան է բարձրացված։

Անհրաժեշտ է պատսպարելու և օգնելու հոգացողութիւն ընձեռել Վանի վիլայէթից սպասվող բազմաթիւ փախստականների վերաբերմամբ։

ԱՆԳԼՈ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.— Խայբէրի լեռնանցքի մօտ տեղի ունեցած կռիւը չափազանց յամառ էր և տևեց մի քանի ժամ։ Անգլիացիք կորցրին մօտ 70 սպանված և վիրաւոր։ Շայիբայի մօտ թշնամին կորցրեց 2,500 մարդ, գերի տուեց 515 հոգի։ Գերիները բերվել են Բասսորա։

Շաբաթ օրը թշնամուն հետապնդող մեր զօրամասերը երևան հանեցին ամենուրեք անկարգ նահանջող թիւրքերի։ Մեր զօրքերը Ջրասուզեցին գետի վրա 12 նաւ, օրանցով թիւրքերի մի մասը փախչում էր։

Ապրիլի 4-ին մենք գրաւեցինք Նախաւիլը։

Ներկայումս թշնամու զօրքեր չը կան Բատաքի մօտ, որ գտնվում է Բասսորայից 50 մղոն հեռաւորութեան վրա։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
8—9 ապրիլի

ԿԱՀԻՐԷ.— Սուլթան Հուսէյնի կեանքի դէմ մահափորձ կատարող անձը դատապարտվեց կախաղանի։

ՍՕՂՈՒՆ.— Լրագիրները տեղեկութիւն են ստացել Լէմնոսից, որ ապրիլի 7-ին Մուդրոսի նաւահանգստի առաջ նկատվեց դաշնակից զօրքերի մեծ տեղափոխութիւն։ Երէկ եկան և իսկոյն անցան 110 շոգենաւ զօրքերով։

Կալանաւորվեց գերմանական մի լրտես։

Միտիլէնից հաղորդում են, որ ապրիլի 7-ին դաշնակից նաւատորմը ռմբակոծեց թիւրքերի զօրաքանակը Նեղուցների մուտքի մօտ։

Կալանաւորվեցին 4 կասկածելի գերմանացի։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պօլսից հաղորդում են, որ մեծ վէզիրը աշխատեց տեղեկանալ Իտալիայի և Միացեալ Պետութիւնների դեսպաններից, թէ կը համաձայնեն, արդեօք, այդ մեծ պետութիւնները հանդէս գալ իբրև միջնորդներ երբեակ համաձայնութեան պետութիւնների առաջ՝ սեպարատ հաշտութիւն կնքելու համար բանակցութիւն սկսելու հարցի առիթով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Բարձրագոյն հրամանով ծովային թանգարանում ցուցադրվեց թիւրքաց «Մէջիդիէ» յածանաւի դրօշակը։

(Լրագիրներից)

✦ «Բ. Բ.»-ին հեռագրում են Աթէնքից, որ Դարդանէլում դաշնակիցների ծովային գործողութիւնները դարձել են աւելի ակտիվ։ Ուժեղ ռմբակոծութիւնը շարունակվում է։

✦ Զմիւռնիան բոլորովին կորված է արտաքին աշխարհից։

✦ Թիւրքերը շարունակում են ամրացնել Սև-ծովի մօտակայ ափը. 40,000 զինւոր թաղնված են Ադրիանապոլսում։

✦ «Բ. Բ.»-ին հեռագրում են Օդեսայից, որ թիւրքերը կարող են դաշնակիցների դէմ հանել 200,000 զինւոր, որոնցից կէսը Էսադ-փաշայի հրամանատարութեամբ գործելու է Գալիպոլի թերակղզում և Դարդանէլի մօտ, իսկ 60,000 զինւոր նշանակված է Կ. Պոլսի պաշտպանութեան համար։

✦ Բոսֆորի եւրոպական և ասիական ափերում զանազան բերդակառուցման աշխատանքներն աւարտված են։

✦ Անգլիացի օդաչուները Զմիւռնիայում փչացրել են կայարանը և ջրասուզել են գերմանական «Մանիլա» շոգենաւը. շատ զինւորներ սպանված և վիրաւորված են։

ՈՒՐՄԻՆ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՍՊԱՆԴԱՆՈՑ

(Սեփական թղթակից)

Թաւրիզ, 30 մարտի

Թիւրք պետութեան սրած ու կազմակերպած արիւնարբու հրոսակախմբերը անհրաժեշտ դաղանութիւններ կատարեցին և գեղեցիկ ու բարեբեր Ուրմիան մատնեցին որի ու կրակի. ոչ մի քրիստոնեայ գիւղ ազատ չը մնաց կոտորածից ու կողոպտութից։ Հայերին ու ասորիներին՝ 10—70 տարեկան տղամարդկանց մորթատեցին և յօշոտեցին անգթաբար. աղջիկներին ու հարսներին գերի վարեցին դէպի քիւրդ ու թիւրք բէկերի հարեմը. ճոխ տները աւարառութեան ենթարկեցին և շինութիւնները կրակի. այնպէս որ՝ Ուրմիայի քրիստոնեայ գիւղերը մոխրակոյտերի են վերածվել այսօր։

Հարստութեամբ և փարթամութեամբ յայտնի Գիւլափշան և Զահարքուշան հայաւորի գիւղերում տեղի ունեցած գազանութիւններն անպատմելի են և նոյնպէս աւերակ դարձան։

Գէօյթէփէ գիւղը ենթարկվեց ռմբակոծութեան. գիւղացիք սկզբում, կարծելով որ վրա տուող քիւրդերը քիչաւոր են, դիմադրութիւն ցոյց տուին և իրանց մատնեցին քիւրդերի վրէժխնդրութեան։

Յատկապէս ուշադրութեան արժանի է Ուրմիայում ամերիկեան հիւանդանոցի կառավարիչ և գլխաւոր բժիշկ դոկտոր Պակերտի հերոսական պաշտպանութիւնը։ Դոկտորը, վերցրած՝ Միացեալ-Պետութիւնների դրօշակը, մէն-մենակ գնաց Գէօյթէփէ, աղատեց քրիստոնեայ գիւղացիներին և բերեց Ուրմի, պահպանելով գիւղացոց՝ գազանների անողոք եաթաղանից։

Հօրդաների սրածութիւնից ու աւարառութիւնից զերծ չը մնաց նաև Ուրմի քաղաքը։ Կային ապաստանվածներ կաթոլիկ ֆրանսիացիների միսիայում. չանսալով միսիայի անդամների՝ քահանաների և կոյսերի աղերսանքներին, քիւրդերն ու ասորիները դուրս քաշեցին 60—ըստ ոմանց 40—հոգի հայ և ասորի քրիստոնեաներին և կախաղան բարձրացրին։

Ամերիկեան միսիայից խոշոր փրկանք պահանջեցին 10,000 հոգուց աւելի ապաստանածների համար, մարդ-գլուխ 4 թումանս։ Եւ որովհետև մինչև այսօր Ուրմիան գտնվում է թիւրքերի ձեռին, կանոնաւոր երթևեկութիւն չը կայ, պօստ չէ ստացվում, այդ պատճառով ևս յայտնի չէ, թէ ինչ վիճակ կայ այժմ այդ թշուառացած երկրում։

Ի լուր այս խժդժութեանց Ամերիկեան առաջնորդարանի ժամանակաւոր խորհուրդը փոխանորդ Կարապետ քահանայի հետ խորհրդակցելուց յետոյ, հ. փոխանորդը այցելեց անգլիական, ամերիկական և ռուսական հիւպատոսներին՝ այս մասին խօսելու և դարման որոնելու, որ չը կրկնվեն ծանօթ խժդժութիւնները Ատրպատականի զանազան վայրերում, ուր կան և ապրում են հայերի և քրիստոնեայ այլ ազգութիւններ։

Արդարև՝ դիւանագիտական մարմինը ժողով ունեցաւ ռուսաց հիւպատոսարանում, և դիմում եղաւ իւրաքանչիւրի կողմից թէհրան դեսպաններին, որ վերջիններս կարենան ազդել տալ թիւրք պետութեան վրա, չը կրկնվելու կոտորածների և աւարառութեան աշխարհաւեր գործը անմեղ քրիստոնեայ ազգաբնակութեան վերաբերութեամբ։

Առաջն. փոխանորդ Կարապետ ք. Մանուկեան առաջնորդարանի կողմից շահին ուղարկեց հետևեալ հեռագիրը.

«Պարսից պետութեան և իր հպատակների չէզոք լինելը ամեն կողմից ապացուցված է. այնուամենայնիւ թիւրք պետութեան քիւրդերը Սալմասի և Ուրմիայի խաղաղ հայ ազգաբնակութիւնը կոտորել են և նրա եղած-չեղածն յափշտակել։ Ուստի խնդրում եմ ձերդ կայսերական մեծութիւնից այս մասին անմիջական ճար և կարգադրութիւն տնօրինել, որ այսուհետև նման դէպքերը չը կրկնվեն»։

Մեզ հասած տեղեկութիւններին նայած, շահի կառավարութիւնը ձեռնարկել է իր հպատակների պաշտպանութեան գործին։

Ի նկատի ունենալով հասոյթների զգալի նուազումը, պարսից կառավարութիւնը փոքրացնում է ֆինանսի պաշտօնեաների քանակը, և հետու չէ, որ բէյլերբէյները փոքր առ փոքր քաշվեն գործերից, և, ըստ առաջնոյն, ֆինանս. վարչութիւնը անցնի պարսիկների ձեռքը։

Հայկազուն

ԻՆՉ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ԵՆ ՀԱՊԱ ԹԻՒՐԲԻՈՑ ՁԵՌՔԸ ՄՆԱՑԱԾ ՄԵՐ ԵՂԲԱՑՐՆԵՐԸ

III

Գալով Հայաստանի մէջ բնակող քիւրդ ցեղերուն՝ անոնք հայերուն պէս ամեն նահանգի մէջ սփռուած չեն, այլ հետևեալ կերպով կարելի է գծել անոնց բնակավայրերու սահմանը։

Վանի և Բիթլիսի նահանգները, Էրզրումի նահանգին Բայազիդէն մինչև Խնուս—Գալ ձգուած բարձրաբերձ տեղերը, որոնք արդէն յարակից են Վանի և Բիթլիսի նահանգներուն։ Նմանապէս Դիարբէքիրի և Խարբերդի նահանգներուն հիւսիսային այն մասերը, որոնք յարակից են վերև յիշուած քիւրդաբնակ վայրերուն։ Այդ վայրերուն բոլոր լեռնաշղթաներն ու ծործորները բռնած են քիւրդերու հիւղակները, իսկ ամառը անոնց վրաններն ու հօտերը։ Քիւրդերու ամենէն խտացած վայրը Բիթլիսի նահանգն է, ուրկէ կը միանան անոնք Մուսուլի և դէպի Էլ-Զօրի իրենց արաբախօս ցեղակիցներուն։ Այս նահանգին մէջն են ամենէն ինքնագլուխ և ապստամբ ցեղերը*)։

Քիւրդերու յատկութիւններուն վրայ երկար բաներ գրուած կան արդէն, ուստի մենք չպիտի փորձենք այստեղ այդ նիւթին վրայ շատ ծանրանալ. միայն թէ՝ յարմար է հոս թուել անոնց գլխաւոր ազդեցիկ ցեղերն իրենց կրօնական և քաղաքական պարագաներով, իմանալու համար թէ օրինց ձեռքն է մատնուած այս պահուս մեր թիւրքահայ եղբայրներուն կեանքը։

ա) Վանի նահանգին մէջ կը բնակին հետևեալ ցեղերը. Թագորցիք, մխուր, շամքի, շքաւդիա մզրկա, շէվեան, մուսկան, մլան և շկակցիք, իսկ հայդարան և զիլան ցեղերուն ալ մէկ-մէկ մասը։ Գլխաւորաբար այս ցեղերու հատուածներն են Պարսկաստանի մէջ տարածուածներն ալ, որոնք այս պահուս պատերազմին մէջ են։

բ) Բիթլիսի կուսակալութեան մէջ բնակած քիւրդ ցեղերն են՝ հասանանցիք, Ջիբրանցիք, սէյդանցիք, պլբցիք, խսեանցիք, մամշկանցիք (Մուշ. Մամիկոնեան), բաղրանցիք, բալակցիք**), ուշդթանցիք (Սասուն. Ռշտունիք), փանջի-նարցիք, ասասունցիք, խուրթցիք, մատգանցիք, ալբկցիք, սլոխցիք, փորանցիք, հաւեղանցիք, ամլանցիք, նայէցիք, պատգանցիք, ատմանցիք, զուլուարցիք, հիզանցիք։ Բուն Բիթլիս քաղաքին մէջ՝ զէդանցիք, հարանցիք, փիրմուսեցիք, մըռեցիք և նասրցիք (քրիստոնեաներ) ու հերսադցիք։ Բիթլիսի նահանգին ամենէն բազմամարդ ցեղերն են՝ Խիզանի, Խարզանի և Բոթանի աշիրները։ Իսկ Բիթլիսի և Վանի ցեղերուն պարագլուխներն երևելին է հռչակաւոր Մուսա-բէյ, խուրթեցի աշիրէթէն, որ կը բնակի Մուշի Խվեար գիւղը։

Փանջի-նար աշիրէթին պէտք՝ Բշարէ-Զաթօն ալ իր աւազակաբարոյութեամբ կը զբաղեցնէր կառավարութիւնը։

դ) Էրզրումի հարաւ-արևելեան մասին ցեղերն են՝ զիլանցիք, բաշմանցիք, ադմանցիք, ադամիք, հայդարանցիք, սիբկանցիք, զէրազանցիք, սարբաշներ (կարափափաք)***), հասանանցիք, ֆարաշներ, Ջիբրանցիք, զուրկցիք, հալաջներ, խուրթցիք, Ջելալցիք (խիստ պատերազմիկ ցեղ մը Բայազիդի շրջանին մէջ)։

Էրզրումի նահանգին ցեղապետներու գլխաւորը հայդարանցի ցեղէն Քէօր Հիւսէին փաշան էր՝ սուլթան Համիդի սիրելագոյն փաշաներէն մին. ժամանակ մը հալածուեցաւ, սակայն ռուս-թիւրքական պատերազմը սկսելուն առթները ուժեղցաւ կարևորութիւնը և սկսաւ նորէն իր գործն դերը։ Բոլոր միւս աշիրէթապետները կը հնազանդին այս փաշային, որ պատկառելի հարստութիւն կուտակած ունի հայերը կողոպտելով և կը բնակի Բատոց աւանը։ Ալաշկերտ—Դուատախ ճակատամարտներուն մէջ միշտ Հիւսէին փաշան, ադմանցոց Պրոաղան, սիրկանցի Աբդիւլ Մէջիդ-բէյը մասնակցած են։

դ) Դիարբէքիրի ցեղերն են՝ մուսանցիք, մուս-ռաշկանցիք (կէս-քիւրդ և կէս-հայ ցեղ մը), կեաճան, բէռազ, կիկան, բուլջաղ, ալբկան, մուսբկան, շարկեան (սատանայապաշտ եզիդիներ), խարակեաչի, միլլի և կարդ մը արաբացած վաչկատուն փոքր ցեղեր։

Դիարբէքիրի քիւրդ ցեղերուն մէջ համբաւաւոր է «միլլի» (ազգ) անուն կէս-քիւրդ և կէս-արաբ ցեղը, որուն պէտք՝ Իբրահիմ փաշա՝ սուլթան Համիդի սիրելագոյն փաշան, երկար տարիներ ահ ու սարսափի մէջ դրաւ Դիարբէքիրն ու շրջակայ նահանգները։ Ամբողջ 8—10 տարի այս փաշան—խարազէտ արաբ մը—անուանական կառավարութիւնը ձեռքին մէջ առած՝ տիրապետեց մինչև սահմանադրութեան հրատարակումը, որ առեն 30—40,000-էն աւելի զօրքով (սահմանադրական) 1908 յուլիսէն մինչև սեպտեմբեր կուսեցաւ միլլի ցեղին դէմ, մինչև որ Իբրահիմ փաշա հալածական հասաւ, ապաստանեցաւ Մծբինի աւերակները (Նսեբին) և հոն ինքնաթունաւորումով մեռաւ։ Այս փաշային զաւակները աքսորուած էին Սրվաղ և այլուր, իսկ ներկայ պատերազմը անոնց վրաններն ու հօտերը։ Քիւրդերու ամենէն խտացած վայրը Բիթլիսի նահանգն է, ուրկէ կը միանան անոնք Մուսուլի և դէպի Էլ-Զօրի իրենց արաբախօս ցեղակիցներուն։ Այս նահանգին մէջն են ամենէն ինքնագլուխ և ապստամբ ցեղերը*)։

Քիւրդերու յատկութիւններուն վրայ երկար բաներ գրուած կան արդէն, ուստի մենք չպիտի փորձենք այստեղ այդ նիւթին վրայ շատ ծանրանալ. միայն թէ՝ յարմար է հոս թուել անոնց գլխաւոր ազդեցիկ ցեղերն իրենց կրօնական և քաղաքական պարագլուխներով, իմանալու համար թէ օրինց ձեռքն է մատնուած այս պահուս մեր թիւրքահայ եղբայրներուն կեանքը։

ա) Վանի նահանգին մէջ կը բնակին հետևեալ ցեղերը. Թագորցիք, մխուր, շամքի, շքաւդիա մզրկա, շէվեան, մուսկան, մլան և շկակցիք, իսկ հայդարան և զիլան ցեղերուն ալ մէկ-մէկ մասը։ Գլխաւորաբար այս ցեղերու հատուածներն են Պարսկաստանի մէջ տարածուածներն ալ, որոնք այս պահուս պատերազմին մէջ են։

բ) Բիթլիսի կուսակալութեան մէջ բնակած քիւրդ ցեղերն են՝ հասանանցիք, Ջիբրանցիք, սէյդանցիք, պլբցիք, խսեանցիք, մամշկանցիք (Մուշ. Մամիկոնեան), բաղրանցիք, բալակցիք**), ուշդթանցիք (Սասուն. Ռշտունիք), փանջի-նարցիք, ասասունցիք, խուրթցիք, մատգանցիք, ալբկցիք, սլոխցիք, փորանցիք, հաւեղանցիք, ամլանցիք, նայէցիք, պատգանցիք, ատմանցիք, զուլուարցիք, հիզանցիք։ Բուն Բիթլիս քաղաքին մէջ՝ զէդանցիք, հարանցիք, փիրմուսեցիք, մըռեցիք և նասրցիք (քրիստոնեաներ) ու հերսադցիք։ Բիթլիսի նահանգին ամենէն բազմամարդ ցեղերն են՝ Խիզանի, Խարզանի և Բոթանի աշիրները։ Իսկ Բիթլիսի և Վանի ցեղերուն պարագլուխներն երևելին է հռչակաւոր Մուսա-բէյ, խուրթեցի աշիրէթէն, որ կը բնակի Մուշի Խվեար գիւղը։

Փանջի-նար աշիրէթին պէտք՝ Բշարէ-Զաթօն ալ իր աւազակաբարոյութեամբ կը զբաղեցնէր կառավարութիւնը։

դ) Էրզրումի հարաւ-արևելեան մասին ցեղերն են՝ զիլանցիք, բաշմանցիք, ադմանցիք, ադամիք, հայդարանցիք, սիբկանցիք, զէրազանցիք, սարբաշներ (կարափափաք)***), հասանանցիք, ֆարաշներ, Ջիբրանցիք, զուրկցիք, հալաջներ, խուրթցիք, Ջելալցիք (խիստ պատերազմիկ ցեղ մը Բայազիդի շրջանին մէջ)։

Էրզրումի նահանգին ցեղապետներու գլխաւորը հայդարանցի ցեղէն Քէօր Հիւսէին փաշան էր՝ սուլթան Համիդի սիրելագոյն փաշաներէն մին. ժամանակ մը հալածուեցաւ, սակայն ռուս-թիւրքական պատերազմը սկսելուն առթները ուժեղցաւ կարևորութիւնը և սկսաւ նորէն իր գործն դերը։ Բոլոր միւս աշիրէթապետները կը հնազանդին այս փաշային, որ պատկառելի հարստութիւն կուտակած ունի հայերը կողոպտելով և կը բնակի Բատոց աւանը։ Ալաշկերտ—Դուատախ ճակատամարտներուն մէջ միշտ Հիւսէին փաշան, ադմանցոց Պրոաղան, սիրկանցի Աբդիւլ Մէջիդ-բէյը մասնակցած են։

դ) Դիարբէքիրի ցեղերն են՝ մուսանցիք, մուս-ռաշկանցիք (կէս-քիւրդ և կէս-հայ ցեղ մը), կեաճան, բէռազ, կիկան, բուլջաղ, ալբկան, մուսբկան, շարկեան (սատանայապաշտ եզիդիներ), խարակեաչի, միլլի և կարդ մը արաբացած վաչկատուն փոքր ցեղեր։

Դիարբէքիրի քիւրդ ցեղերուն մէջ համբաւաւոր է «միլլի» (ազգ) անուն կէս-քիւրդ և կէս-արաբ ցեղը, որուն պէտք՝ Իբրահիմ փաշա՝ սուլթան Համիդի սիրելագոյն փաշան, երկար տարիներ ահ ու սարսափի մէջ դրաւ Դիարբէքիրն ու շրջակայ նահանգները։ Ամբողջ 8—10 տարի այս փաշան—խարազէտ արաբ մը—անուանական կառավարութիւնը ձեռքին մէջ առած՝ տիրապետեց մինչև սահմանադրութեան հրատարակումը, որ առեն 30—40,000-էն աւելի զօրքով (սահմանադրական) 1908 յուլիսէն մինչև սեպտեմբեր կուսեցաւ միլլի ցեղին դէմ, մինչև որ Իբրահիմ փաշա հալածական հասաւ, ապաստանեցաւ Մծբինի աւերակները (Նսեբին) և հոն ինքնաթունաւորումով մեռաւ։ Այս փաշային զաւակները աքսորուած էին Սրվաղ և այլուր, իսկ ներկայ պատերազմը

*) Անցեալ տարի ապրիլին հիլան ցեղի պարագլուխ Մոլլա-Սելիմի ապստամբութիւնը և ապա ռուսաց հիւպատոսարան ապաստանելը թարմ օրինակ մըն է։

**) Բալակցիք իրենք վիրենք Բալբատունիներուն ցեղակից կը համարեն։

***) Ռուսատանէն զաղթած և թիւրք կառավարութեան ձեռամբ հայոց քանդուած գիւղերը զետեղուած միսիւլմաններ են։

բազմին առնները իրենց համբաւաւոր ձիաւոր գնդերովը բերուեցան Կովկասի դիրքերը։ Քեօփրիւ-Քեոյի առաջին կռիւին բաղխողները (հոկտ. 1914) այս գնդերն էին։ Այս իրողութիւններէն յայտնի է, որ միւսիւլման ցեղերն ու կառավարութիւնը միշտ գժտուած էին, սակայն կռիւի առն (քրիստոնեային դէմ) միացան ամենը։

Ե) Խարբերդի և Սըվազի նահանգներուն մէջ բուն քիւրդ ցեղ չկայ գրեթէ, միայն Խարբերդի Դերսիմին կղզեալ ապստամբները կան, որոնց զսպումին համար միշտ մտահոգ էր Թիւրք կառավարութիւնը։

Այս լեռնաբնակներն ալ «կղզեալաշ-քիւրդ» անուան տակ ցեղերու բաժնուած են, որոնց մէկ մասը զազայերէնի մօտիկ քիւրդերէնով մը կը խօսի, իսկ բուն զազայերէն կը խօսին միմիայն Բալուի և Ճապաղջուրի շրջանի քիւրդերը (խիստ ճարպիկ, նրբակազմ խումբ մըն են, որ մասնաւոր ցեղի մը չեն պատկանիր)։

Իսկ բուն կղզեալաշները՝ կը բնակին Դերսիմի Խոզաթ, Մեծկերտ գաւառակները և մինչև Սըվազի սահմանները կը հանին։ Անոնց աւանդութիւններ ու սովորութիւնները կը մօտենան Տիգրանակերտի հարաւային կողմը բնակող սատանայապաշտ շարկեանցիներուն։

Դերսիմի կղզեալաշները կէս-քրիստոնեայ և կէս-միւսիւլման կրօնք մը ունին։ Ունին իրենց մեծերը (սէյիդները), որոնց՝ իբրև կրօնաւորներու՝ կը հպատակին։ Ս. Սարգիսի շաբթապասին 3 օրը մարդով ու անասուններով ծոմ կը բռնեն։ Աղանդ մըն ալ կայ, որ շատ հայասէր ցոյց կուտայ ինքզինքը։ տարին անգամ մը գարնան առեն սէյիդը կոնքի մը մէջ բաղարջ հացով (բրդուած) գինի կը դնէ մութ ժողովարանին մէջ իր նուիրական գաւազանովը միասին և կը հրաւիրէ իր ժողովուրդն ու կառաջարկէ որ ինքզինքն արժանի տեսնողը ելնէ և գալ մը ուտէ նոյն բաղարջէն ու գինիէն։ Անոնց լեզուն բուն քիւրդերէնն է (կուրմանջին)։

Տիգրանակերտի շարկեան ցեղն ալ ինքզինք շատ հայասէր ցոյց կուտայ *)։ Այնպէս որ՝ 1909 գարնան առեն, ուրուրեք որ այս ցեղէն և իրենց ցեղակից եզիդիներէն կային, Մէրտինի գաւառին մէջ նստող պատերազմի հրաւէրով հանրագրութիւն մը պատրաստեցին, և պետին որդին՝ Իսմայիլ բէյը իբրև ներկայացուցիչ էջմիածին եկաւ նոյն հանրագրութիւնովը հայադաւանութիւն ընդունելու խնդրով, և այլն։

Այսպէս՝ հայոց յարելու և անջատուելու հարցեր յաճախադէպ են Հայաստանի մէջ։ Քանիցս ականատես եղած ենք, որ բռնաւորներու ձեռքը նեղը մնացած ցեղեր միահամուռ հայոց եկեղեցին վազած են։ Եւ սակայն հայերը, անցեալի դառն փորձառութիւններէն խրատուած, մերժած են այդ կարգի ինքնակոչները, որոնց շնորհիւ թիւրք կառավարութեան ձեռքը պատրուակ մը ևս պիտի ստեղծուէր հայերը չարչարելու առթիւ մէջ։

Այստեղ՝ համառօտակի քիւրդ ցեղերու բաժանման պատկերը տալէ յետոյ, պէտք է աւելցնել նաև, թէ այս ամէն ցեղերը, յաճախադէպօրէն այստեղ ու այնտեղ՝ շէյխի (կրօնապետ) մը կամ բէյի մը շուրջը հաւմախմբուած՝ ապստամբութիւն յարուցած են թիւրք կառավարութեան դէմ։ Սուլթան Համիդ գանոնք գլխաւորապէս հանդարտեցնելու և հայոց բնաջնջման իր ծրագրին գործիք ընելու համար, վերոյիշեալ մեր թուած վեց նահանգներու մէջ բնակող բոլոր ցեղերուն տգէտ լեռնցի պետերը պաշտօններով վարձատրեց, գանոնք զօրականներ կարգեց և համիդիէ գունդեր անուանեց նոյն ցեղերու խուժանական գնդերը։

Անկէ ի վեր քիւրդ համիդիէները Հայաստանի բարձունքներու վրայ դամոկլեան սուրի պէս կախուած են հայերու գլխուն։ Այս կէտը՝ ճամբորդողին անմիջապէս աչքին իյնալիք կէտն է։ Քիւրդը ամէն տեղ իր ձիովն ու զէնքերովը համարձակ կը թափառի, հագէառ հրեշտակի պէս կը խրախտայ հայուն վրայ, որքան ալ անոր հետ հաւասարօրէն ապրած ըլլայ։ Քիւրդերը ընդարձակ արօտատեղիներ և հօտեր ունին, մէկ մասն ալ երկրագործութեամբ կը զբաղին, որուն խիստ անյարմար են, ինչպէս և ամէն արհեստի մէջ։ Փողի մասին նեղը մնացած ատեն աւազակութեան կը դիմեն։ Ոչ դպրոց ունին, ոչ կրթութիւն։ Իսլամական կրօնին ալ շատ յարողը չեն։

Յատկապէս որոշուած աշխարհներէն (ցեղ) զատ, դաշտերու մէջ և քաղաքները ապրող շատ մը քիւրդեր՝ թիւրքացած քիւրդեր դարձած են։ Այս կարգի քիւրդերն ու թիւրքերն են, որ Հայաստանի ամենաթունդ միւսիւլմաններն են։

Գաղթական

*) Հայ դպրոցները կը յաճախէին շարկեանցի տղայք և շատ ընդունակ էին ուսանելու։

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ ԼՎՕՎՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 ապրիլի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը այսօր բարեհաճեց ժամանել Լվով։

Ստորագրեց՝ Կայսերական Պալատի մինիստր կոմս Ֆրեդերիկս։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 ապրիլի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կարպատներուն աւստրիացիք ապրիլի 7-ի ընթացքում և լոյս 8-ի գիշերը փորձեցին յարձակում գործել մեր զօրադիրքի վրա Տելէպօչի մօտ, բայց վանվեցին մեր հակայարձակումներով։ Կրելով խոշոր կորուստներ, հակառակորդը քաշվեց իր դիրքերը։

Մնացած զօրաճակատներում տեղի ունեցան սովորական հրացանագրութիւն և թնդանօթաձգութիւն։

ՎԱՐՇԱՎԱ.— Կէսօրին գերմանական մի աէրոպլան թռաւ քաղաքի վրա և նետեց երեք ռումբ, որոնք սակայն ոչ մի վնաս չը պատճառեցին։ Ռումբերից մէկը նոյնիսկ չը պայթեց։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8—9 ապրիլի

ՊԱՐԻԶ.— Ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

«Բաւական ուժեղ թնդանօթաձգութիւն տեղի ունեցաւ Ուազի և Էնի միջև։ Մասսի և Մօզելի միջև մենք երեկոյեան ժամը 7-ին վանեցինք թշնամու երկու հակայարձակումը։

«Բէլգիացի օդաչուները ռումբեր նետեցին Բրիւգէի ռազմապահեստի և Լիսսէվէգէի օդաչուութեան դաշտի վրա»։

Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն.

«Բէլգիայում գերմանացիք յարձակում գործեցին «60-դ բլուրի» վրա, որ գտնվում է անգլիացի զօրքերի ձեռքում։

«Զվարտելէնի մօտ թշնամու կորուստները հաշվում են 3000—4000 մարդ։

«Շամպայնում մենք թոյլ չը տուինք գերմանացիներին յարձակում գործել։

«Արգոնեան բարձրաւանդակում մեր զօրքերը խափանեցին թշնամու խիզախ յարձակումը։

«Առհասարակ վերջին օրերում մենք առաջացել ենք 700 մետր։ Թշնամին թողեց 300 սպանված։

«Լոթարինգիայում թնդանօթային կռիւներ են։

«Էլզասում մենք հեշտութեամբ վանեցինք թշնամու հակայարձակումը։

«Մեր օդաչուները ռումբեր նետեցին Վէվրում գտնուող գերմանական Շտաբի գլխաւոր բանակի վրա»։

ԼՕՆԴՕՆ.— Գերմանացիք շարունակում են խիզախ յարձակումներ գործել «60-դ բլուրի» վրա և ամբողջ գիշերը եռանդով ռմբակոծում էին այն։

Գենտի օդաչուութեան սրահի վրա մենք նետեցինք ռումբեր, որոնց վնասը ըստ եւրոյթին խոշոր պէտք է լինի։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Մի քանի օր լուրեր են տարածվում, թէ Գերմանիան կենտրոնացնում է արևմտեան զօրաճակատում չափազանց մեծ թիւ զինուորական օյժեր։ Այժմ Ամստերդամի «Տելեգրաֆ» լրագիրը հաղորդում է, որ վերջին ժամանակ արևմտեան ռազմաճակատն են գալիս գերմանական և աւստրօ-ունգարական խոշոր զօրամասեր։

Այդպիսի լուրեր ստացվում են նաև Ամստերդամից։ Բէլգիայում միջոցներ են ձեռք առնված բելգիական-հոլանդական սահմանը փակվելու վերաբերութեամբ։ Ենթադրվում են, որ գերմանացիք նոր արշաւանքի են ձեռնարկելու բելգիական զօրաճակատում դանիական-շլեզվիգեան սահմանի կողմից։

Լրագիրներին հաղորդում են, որ Ֆլենսբուրգ-Տինդերն երկաթուղագծի ուղղութեամբ կենտրոնանում են մեծաքանակ գերմանական զօրամասեր և ուժեղ թնդանօթաձիգ վաշտեր։

Երկուշաբթի օրվանից հեռագիրը արտասահմանի հետ խզվել է։ Ի նկատի ունենալով ազգաբնակութեան անհանգստութիւնը, գերմանական իշխանութիւնները յայտնում են, որ այս ծանր պատերազմում գաւառների վիճակը ստիպում է ձեռք առնել տարբեր միջոցներ ապահովութեան համար, բայց այդ չը պէտք է անհանգստութեան առիթ ծառայէ։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 ապրիլի

ՆԻՇ.— Թշնամու մի զօրախումբ ապրիլի 4-ին տասն նաւակով փորձեց անցնել Դունայի վրա գտնվող Ադակալէ կղզին, բայց սերբական թնդանօթների կրակը այդ փորձը խափանեց։ Աւստրիացիք ի պատասխան կրակ բացին թնդանօթներից սերբական դիրքերի վրա Տեկիայի մօտ։ Այդ թնդանօթաձգութեան ժամանակ թշնամին արձակեց երեք անգամ աւելի ռումբ, քան սերբերը, բայց անհետևանք։

Միևնոյն օրը աւստրիացիք մի քանի ռումբ արձակեցին Ֆիլ գիւղի վրա և կրծոտեցին մի քանի տուն։

Ապրիլի 5-ին թշնամին ռմբակոծեց սերբական դիրքերից մինը Բելգրադի մօտ, բայց նոյնպէս ապարդիւն։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

8—9 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.— Համայնքների պալատ։ Զօրքին անհրաժեշտ մթերքներ հայթայթելու մասին ծագած վիճաբանութիւնների ժամանակ Լլոյդ Ջորջը յայտնեց, թէ մինչև պատերազմը ոչ օք Անգլիայում չէր կարող ենթադրել, որ գործող զօրաբանակը երբևէ կանգնէ վեց զօրաբաժնի (դիվիզիա) թիւց. մինչդեռ նա կարող է ստոյգ կերպով պնդել, որ ներկայումս զօրաճակատում գտնվում է վեց անգամ աւելի միանգամայն սպառազինված զօրք, որոնց շարքերում քիչ չեն թարմ օյժերը։

Այս յայտարարութիւնն ընդունվեց ծափահարութեամբ։

Ապա Լլոյդ Ջորջը պարզեց զօրքին ռազմամթերքներ հայթայթելու հարցի դրութիւնը։ Պատրաստված ռազմանիւթերի քանակութիւնը 19 անգամ աւելի եղաւ համեմատած սեպտեմբերին պատրաստված քանակութեան հետ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Թշնամու դէմ գերազանց գործ տեսնելու համար պարգևատրվում են՝ ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով կօզակների 1-ին կովկասեան դիվիզիայի հրամանատար գեներալ-լեյտենանտ Բարատովը և ս. Աննայի 1-ին աստիճանի շքանշանով 39-րդ հետիոտ դիվիզիայի պետ գեներալ-լեյտենանտ Դեվիտաը։

ՀՌՕՄ.— Մինիստրների խորհրդի նիստում, որ ունէր կարևոր նշանակութիւն, բոլոր մինիստրները կարդացին զեկուցումներ ներկայ իրավիճակի առիթով։ Արտաքին գործերի մինիստրը պարզեց ներկայ միջազգային դրութիւնը։ Իտալիայի դիրքը դարձաւ երկարատև վիճաբանութեան առարկայ, վանդի մինիստրների խորհուրդը շարունակեցին այդ դիրքը ընդգրկող բոլոր խնդիրները։ Խորհուրդը ոչ մի հերթական վճիռ չը կայացրեց։

ԼՕՆԴՕՆ.— Միջերկրական ծովի արևելեան մասից «Դէյլի Տելեգրաֆին» հեռագրում են, որ գեներալ սըր-Ջոն-Համիլտոնը հրամանատարում է Միջերկրականի զօրաբանակը, որը ներկայումս վերջնականապէս կազմակերպված է։ Այդ զօրաբանակի մէջ մտնում են մեծ-բրիտանական զօրքի լաւագոյն գումարտակները, որոնք մինչև օրս չեն մասնակցել պատերազմին։ Ֆրանսիական գաղութային դիվիզիան գեներալ Դամադի հրամանատարութեամբ մտնում է Համիլտոնի զօրաբանակի կազմի մէջ։

ԿԻԼԻՎ.— Կարճատև ընդմիջումից յետոյ նորից բերում են հաղարաւոր գերիներ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Հրատարակվեց Բարձրագոյն հաստատված մինիստրների խորհրդի օրագիրը զօրքի, նաւատորմի և ճանապարհների հաղորդակցութեան հաստատութիւնների վառելանիւթը ապահովելու միջոցների մասին, ինչպէս նաև այն մասնաւոր ձեռնարկութիւնների, որոնք աշխատում են պետական ինքնապաշտպանութեան նպատակների համար։ Համաձայն այդ օրագրական որոշման, պատերազմական կամ արտակարգ պահպանողական վիճակում յայտարարված վայրերում այն ձեռնարկութիւնները, որոնք զբաղվում են վառելանիւթ պատրաստելով, պարտաւորվում են ընդունել և կատարել ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի ցուցմունքով տրված պատուէրները միւս պատուէրներից անպայման առաջ։ Եթէ գործարանատէրերը մերժեն ընդունել և կատարել ճան. հաղ. մինիստրի մասնանշած պատուէրները, յիշեալ մինիստրին իրաւունք է տրվում արգելք դնել։

ՀՌՕՄ.— Երէկ սենատում յայտնի դարձաւ սենատոր Կարաֆաղանդրի և իշխան Բիւլովի միջև եղած խօսակցութեան բովանդակութիւնը, որի ժամանակ Բիւլովն ասել է, թէ աւստրօ-իտալական բանակցութիւնները առաջ են գնում չափազանց դանդաղ, այնպէս որ կարելի է նոյնիսկ սպասել, որ նրանք լիակատար անյաջողութեան մատնվեն։ «Նրանց անյաջողութեան դէպքում,— ասաց Բիւլովը,—Հռոմի և Վիէննայի միջև կարող է յարաբերութիւնը խզվել, որը, ի հարկէ, առաջ կը բերէ ցաւակցութիւն Գերմանիայում։ Սակայն իմ պարտականութիւնն եմ համարում կարականապէս ասելու, որ Իտալիայի հետ պատերազմելու ցաւալի անհրաժեշտութեան դէպքում Գերմանիան մինչև վերջը կը կատարէ իր պարտականութիւնը Աւստրօ-Ունգարիայի վերաբերութեամբ»։

ԼՕՆԴՕՆ.— Ռուսաց հիւպատոս բարոն Հէյկինգը Լոնդոնի գործունեայ մարդկանց միութիւնում ասաց ի միջի այլոց, որ պատերազմը վերջանալուց յետոյ Ռուսաստանը կը կապէ առևտրական պայմանագիր Գերմանիայի հետ, հաւանօրէն Գերմանիայի համար աւելի պակաս նպաստաւոր պայմաններով։ Այդ պատճառով Ռուսաստանի և Անգլիայի միջև պէտք է կնքվի առանձին պայմանագիր, որ երկու կողմերին դնէ անհամեմատ նպաստաւոր պայմաններում։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Բժշկական խորհուրդը անհրաժեշտ գտաւ ենթարկել զիւղատնտեսական աշխատանքների համար նշանակված պատերազմական գերիներին բժշկա-սանիտարական հսկողութեան։

ԿԻԼԻՎ.— Եկան Պերեմիշլի բերդապահ զօրքի 90 գերի բժիշկ և սանիտար։

ԽԱՐԿՕՎ.— Պրոֆէսորների խորհուրդը ընտրեց Գերագոյն Զօրահրամանատարին Խարկովի համալսարանի պատուաւոր անդամ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Հեղինակաւոր աղբիւրից տեղեկացնում են, որ Աւստրիան վճռել է մերժել Իտալիայի պահանջները։

◆ Իտալիան Կրէտէյի ֆիրմայից ձեռք է բերել 600 մօրտիր։

◆ Օսլոյինը հեռագրում է «Р. Вѣд.»-ին Հռոմից. «Իտալիան պատրաստ է պատերազմի։ Բիւլովը պատրաստվում է մեկնել։ Օպէն հասել է, երբ այն կողմերը, որոնց Իտալիան ցոյց կը տայ պաշտպանութիւն, կարող են խօսել նրա հետ իբրև դաշնակից մեծ պետութեան հետ, չը սակարկելով, բայց և ճանաչելով նրա արդար իրաւունքները»։

◆ Բէլգիական սահմանագլխից հաղորդում են, որ գերմանական և բէլգիական գործարանները վերջին ժամանակները շաբաթով ցեպպէլիններ են պատրաստում։ Պատրաստվում է հսկայական օդային արշաւանք Անգլիայի վրա։

◆ «Рус. Сл.»-ին հեռագրում են Աթէնքից. «Յունաստանը, ի պատասխանի երբեակ համաձայնութեան առաջարկութեան, թէ ինչ պայմաններով նա կը միանայ իրան Գերմանիայի, Աւստրիայի և Թիւրքիայի դէմ գործելու համար, յայտնել է, որ խնդրում է Զմիւռնիան, ապահովութիւն իր երկրի ամբողջութեան և պաշտպանութիւն բուլգարական վտանգից»։

◆ «Нов. Вр.»-ի ասելով, երկրագործութեան ու հողային բարեկեցութեան գլխաւոր կառավարիչը մեկնեց Գերագոյն Զօրահրամանատարի բանակատեղին։

◆ Դաշնակից օդաչուները ռմբակոծել են Հանսէյմի և Միւլհաուզէնի կայարանները և հրդեհել են Մանհէյմի ընդարձակ պահեստատեղիները։

ՎԵՆԻԶԵԼՈՍԻ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ

Աթէնքում հրատարակված են յունական առաջին մինիստր Վենիզելոսի՝ թագաւորին յանձնած (1915 թ. յունվարի 11-ին և 17-ին) զեկուցագրերը։ Երկու գրութիւնն էլ վերաբերում են այն ժամանակ Յունաստանի՝ Թիւրքիայի դէմ հանդէս գալու ծրագրին, երկուսն էլ ներկայացնում են աւելի քան պատմական շահեկանութիւն։

Առաջին գրութեան մէջ մինիստր-նախագահը յայտնում է ի գիտութիւն թագաւորի, որ ինքն առաջարկութիւններ է տացել Սերբիային պաշտպանելու մասին այն պայմանով, որ երբեակ համաձայնութեան պետութիւնները երաշխաւորում են Յունաստանին նշանաւոր հողամասեր տալ Փոքր Ասիայում։ Այդ առաջարկութիւնների հետ միաժամանակ Վենիզելոսին մատնացոյց է արվել, որ Յունաստանը պէտք է տայ իր համաձայնութիւնը այն հողային զիջումների վերաբերեալ, որպիսիք պատրաստ է անել Սերբիան Բուլգարիային։ Վենիզելոսը շեշտում է, որ թոյլ տալով Աւստրիային աւերել Սերբիան՝ յոյները այնուհետև հարկադրված կը լինէին, Սերբիայի հետ ունեցած պայմանագրի համաձայն, օգնել նրան առաջն առնելով Բուլգարիայի յարձակման։ Այսօրինակ հանգամանքներում ցոյց տուած օգնութեան համար, Յունաստանը, ի հարկէ, չէր կարող ստանալ ոչ մի կօմպենսացիա։ Վենիզելոսը արտայայտում է նաև այն կարծիքը, որ Ռումինիայի և Բուլգարիայի հետ համերաշխ գործողութեան ապահովումը յունական գլխաւոր շտաբը անհրաժեշտ պայման է համարում հանդէս գալու համար, Յունաստանը կարող է, ծայրայեղ դէպքում, զոհել և Կաւալան այն նպատակով, որ ապահի դեռ ևս Թիւրքաց լծի տակ գտնվող յոյներին և ստեղծի Մեծ Յունաստան։ Մինչև Կաւալայի զիջումը ենթադրվում է փոխել հպատակները, այսինքն յոյները Բուլգարիայից անցնեն յունական հողը, իսկ բուլգարները Յունաստանից բուլգարական հողը, որի ժամանակ կառավարութիւնը պէտք է գնի նրանց գոյքը։ Ազգային այս տեղափոխութիւնը, Վենիզելոսի կարծիքով, կը մաքրէր բալկանեան ֆեդերացիան վերականգնելու ճանապարհը։ Վերջում Վենիզելոսը ընդգծում է, թէ ապագայում ինչ վտանգներ են սպառնում յունականութեանը Գերմանիայի և Թիւրքիայի յաղթութեան դէպքում։ Թիւրքիան կուժեղանայ և համարձակութիւն կը ստանայ, և կասկած չի լինի, որ նա սիստեմատիկ հալածանք կը սկսի յոյն հպատակների դէմ, առանձնապէս Փոքր Ասիայում։ Այս քաղաքականութիւնը պաշտպանութիւն կը գտնի Գերմանիայի կողմից, որը իր ծրագիրներն ունի Ասիական Թիւրքիայում։

Կոնստանտին թագաւորը այդ զեկուցագրին պատասխանել է, յայտարարելով թէ իր կարծիքով՝ Յունաստանի համար բաւական դաշնակցութիւն ապահովել Ռումինիայի հետ։ Գլխաւոր շտաբի երկիւղը՝ Բուլգարիայի հնարաւոր յարձակման վերաբերմամբ՝ թագաւորը հերքեց և լիազօրեց Վենիզելոսին բանակցութիւններ սկսել Ռումինիայի հետ։

Երկրորդ գրութեան մէջ Վենիզելոսը ցոյց է տալիս թագաւորին, որ Ռումինիան համաձայն չէ հանդէս գալ Յունաստանի և Սերբիայի շարքում, եթէ դաշնակցութեանը չը մասնակցի և Բուլգարիան։ Միևնոյն ժամանակ նա նորից յիշեցնում է, որ յունական գլխաւոր շտաբը առաջվան պէս հանդէս գալը առանց Բուլգարիայի դաշնակցութեան համարում է անհնարին։ Այդ պատճառով նա առաջարկում է թագաւորին քննել Բուլգարիայի հետ համաձայնելու հարցը՝ զիջելով նրան Դրաման, Կաւալան և Սարի-Շապանը։ Այդ, մօտ 2000 քառակուսի կիլոմետր հողերի, ուր ապրում են ընդամենը 30,000 յոյներ, զիջողութեան փոխարէն Յունաստանը Փոքր-Ասիայում իր համար կապահովէր մի հողամաս, որը կը հասնէր 135,000 քառ. կիլոմետրի և բնակեցված կը լինէր 800,000 հոգի յոյնով, բացի այդ՝ նա կը պահանջէր Սերբիայից, որպէս օգնութեան պարգև, Դոյրան-Գեվգելի շրջանը, այսինքն մօտ 1000 քառ. կիլոմետր։

Փոքր-Ասիայում յունական ապագայ տիրապետութիւնների համար Վենիզելոսը ենթադրում է այսպիսի սահմաններ.—Փիւնիկի հրուանդանը (թերակղզու հարաւային ափում), Աղ-դաղի, Կիստեռ-դաղի, Սալթան-դաղի, Դամաս-դաղի և Կազ-դաղի լեռնակատարները ու Ադրամիտի ծովածոցը։ Այդպիսով, հրաժարվելով Դրամայից և Կաւալայից, Յունաստանը դրա փոխարէն կը կորցնէ Սալոնիկը իր տերիտորիան։ Որպէսզի վերացվի գլխաւոր շտաբի արտայայտած երկիւղը, Բուլգարիայի՝ Յունաստանի վրա հնարաւոր յարձակման մասին, Թիւրքիայի դէմ գործելու դէպքում, Վենիզելոսը յոյս է յայտնում այդ հնարաւորութիւնը երաշխաւորել երբեակ համաձայնութեան պետութիւնների հետ պայմանագիր կնքելով։

Հաշիւներ տեսնելով, Վենիզելոսը աղերսում է թագաւորին՝ գործել առանց տատանումի, որովհետև այն աւելը, որ կայ հիմա, կարող է չը կրկնվել այլևս։ «Եթէ մենք չը մասնակցենք այս պատերազմին, մենք, անկասկած, ինչ էլ լինի նրա հետևանքը, ընդմիշտ կորցնում ենք Փոքր-Ասիան։ Եթէ յաղթի երբեակ համաձայնութիւնը, յաղթող պետութիւնները իրանց մէջ կամ Իտալիայի հետ կը բաժանեն ոչ միայն Փոքր-Ասիան, այլև Թիւրքաց մնացեալ տիրապետութիւնները... Եթէ Գերմանիան յաղթի, նա, ի հարկէ, կուլ կը տայ ողջ Փոքր-Ասիան»։

Կոնստանտին թագաւորը հաւանութիւն է տալիս Վենիզելոսի գրութեան և յանձնարարում է նրան գործել գրութեան մէջ եղած տեսակէտի համաձայն։ Բայց Վենիզելոսը որոշից սպասել փոխառութեան մասին եղած բանակցութիւնների աւարտման, որպիսի փոխառութիւնը Բուլգարիան աշխատում էր այն ժամանակ կնքել գերմանացիներ և աւստրիական փողային շուկաներում։ Երբ, մի քանի օր անց, յայտնի եղաւ, որ փոխառութիւնը կնքված է, Վենիզելոսը գտաւ, որ ըստ անյարմար է բանակցութիւններ սկսելու համար։ Այն ժամանակ յոյն-բուլգարական համաձայնութեան ծրագիրը մի կողմ նետվեց, և այդ օրվանից այլևս հարց չը բարձրացաւ դրա մասին։

(«Рус. Вѣд.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 ապրիլի

ՆԻՇ.— Ապրիլի 5-ին ալբանների մի խումբ, թւով մօտ 700 հոգի, յարձակվեց սերբական սահմանի վրա Զաֆաբանի մօտ՝ Օբիդայի շրջանում։

Կռիւն սկսվեց կէսօրվայ ժամը 5-ին. մանրամասնութիւններ առայժմ չը կան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 ապրիլի

ԹԷՀՐԱՆ.—Թիւրքերի արշաւանքը դէպի Քիրմանշահ շարունակվում է։ Պարսկական զօրամասերը, որոնք ուղարկվել էին դէպի Եկերէն լեռնանցքը, նահանջեցին Թիւրքերի առաջ, որոնք և գրաւեցին լեռնանցքը և այժմ գտնվում են Քիրմանշահից 30 վերստ հեռաւորութեան վրա։ Քիրմանշահի նահանգապետին կառավարութիւնը հրամայեց նահանջել Քիրմանշահի մօտից Թիւրքերը մտնելու դէպքում, որպէս զի կարելի լինի խուսափել արիւնհեղութիւնից, որովհետև անկարելի է դիմադրել Թիւրքերին լուրջ կերպով։

Թէհրանի կաբինէտը շարունակում է բանակցութիւններ վարել Թիւրքաց դեսպանի հետ և յոյս է տածում, թէ զօրքերը ետ կը կանչվեն։

Մամուլը ցաւակցում է, որ Թիւրքերը յափշտակեցին պարսկական երկիրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

—

Ստացանք 1) Գրիգորեան կայարանից, Գ. Գրիգորեանի միջոցով, հանգանակված տաս կայարանում՝ ա. Հերիցնազ Տէր-Գրիգորեանի միջոցով, 25 ր., 2) Բիւրայից, Գէնֆիաճեանի միջոցով, հանգանակված գումար (երկրորդ նուագով, ցուցակը կը մնայ), 131 ր. 50 կ., 3) Թախտաբազարից, Ստեփանեանի, Ա. Խ. Շաքարեանի, Խ. Գրիգորեանի և Ա. Գասպարեանի միջոցով ստացված դիմակահանդէսից 32 ր., 4) Աֆիոնում, Զուարթ և Աւետիք Ե. Խաչատրեաններից, Շաքրօ Կ. Մարտիրոսեանի ուղարկած վրա պակ դնելու փոխարէն 10 ր., Զարշուլից, Սմբատ Մելքումեանից, Գրիգոր Ք. Տէր-Գրիգորեանի միջոցով 50 ր., Թախտաբազարից, Արշակ Ք. Տէր-Ոսկանեանի միջոցով, Վանօ Խէչիկոյնի մանուկ մկրտութեան ժամանակ հաւաքած (նամակը կը տպվի), յանձնելի Էջմիածնի Գլխաւոր յանձնաժողովին, 111 ր. 40 կ., 7) Անդրանիկից, Ներսէս Աւետեանի միջոցով, հանգանակված Զատկի օրը տեղական եկեղեցում 20 ր. 9 կ.։ Գումարը 379 ր. 99 կ.։ Նախկին ստացված 27,597 ր. գումարի հետ (տես «Մշակ» № 71) ստացել ենք 27,976 ր. 99 կոպէկ։

ՅՈՒՅԱԿ

Դուդասեի նուիրատուների

(Յօգուտ հայ փախստականների)

—

(Տես «Մշակ» № 31)

Տիկ. Ս. Նուպարեան 4 բուլուղ, 1 պալտօ և 1 բաճկոն, տիկնայք Է. Ներսէսեան, Մ. Քէչեան, Թագուհի և օր. Սիրան 1-ական անձեռոց, տիկ. Թագուհի Քէչեան 1 շրջազգեստ, տիկ. Ե. Արզումանեան 1 կօֆտա, 1 անձեռոց և 1 շապիկ, Ա. Եանուֆեան, Հ. Ասլանեան, Աղնիւ Խաչիկեան և Աղգանոյշ Խաչիկեան 1-ական անձեռոց, Ն. Գալայճեան 1 անձեռոց, 1 շապիկ, Թ. Քէչեան և Ն. Գալայճեան 1-ական շապիկ, Ն. Գալայճեան և Վ. Խաչիկեան 1-ական կօֆտա, Իւրաքեր Գալայճեան 1 անձեռոց, 1 շապիկ, Ն. Գալայճեան 1 շապկացու բատա, Խ. Ասլանեան 1 շապկացու, Փ. Խաչիկեան 1 շապիկ և 1 կօֆտա, Մ. Նուբարեան 1 շալ, 1 շրջազգեստ, Թ. Նուբարեան 8 արշին բատա, Ֆ. Ասլանեան 1 զոյգ գուլպայ և 1 լաչակ, Վ. Եայլեան 1 շապիկ, Ս. Եայլեան 1 շրջազգեստ, 2 բուլուղ, Գ. Միքայէլեան 1 շրջազգեստ, Է. Միքայէլեան 1 կօֆտա, 1 շրջազգեստ, Խ. Էօքսիւզեան 2 շապիկ, Զ. Միքայէլեան 1 շապիկ, 1 լաչակ, Հ. Միքայէլեան 1 շրջազգեստ, Ա. Միքայէլեան 3 կօֆտա, 1 շապիկ, 1 շրջազգեստ, Մ. Զօլաքեան 1 շապիկ, 1 անձեռոց, 1 թաշկինակ, Հ. Զօլաքեան 1 կօֆտա, 1 շրջազգեստ, Ե. Զօլաքեան 1 կօֆտա, 3 շապիկ, 1 ներքնավարտիկ, 1 շրջազգեստ, Ս. Միքայէլեան 2 թաշկինակ, 1 բուլուղ, 1 կօֆտա, 1 շապիկ, 1 անձեռոց, Հ. Միքայէլեան 1 լաչակ, 1 անձեռոց, 1 շապիկ, 1 գոտի, 1 գոգնոց, Հ. Ա. Միքայէլեան 1 շրջազգեստ, 1 տիւլ, 1 լաչակ, Ա. Միքայէլեան 1 գոգնոց, 1 լաչակ, 1 ժակէտ, 1 բլուզ, 1 շրջազգեստ։

ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐ

III

Ամբողջ չորս ամիս, գուցէ և աւելի՝ եթէ պատերազմը անմիջապէս չը սկսվեն դաշտերը, դպրոցական պատանիները պէտք է դըպրոցից դուրս անց կացնեն, շատերը իրանց ընտանիքների մօտ։ Այստեղ չենք ուզում ծանրանալ այն մասին, թէ որքան մեծ նշանակութիւն ունի չորս ամիսը պատանու զարգացման և հասունութեան համար. յիշենք միայն, որ պատանիները շատ արագ են զարգանում և իրանց դիւրըմբռնողութեամբ և դեռ անկազմակերպ ուղեղով չորս ամսում կարող են և շատ առաջ գնալ՝ եթէ նպաստաւոր լինեն պայմանները, կարող են և շատ ետ մնալ՝ եթէ անպատեհ լինեն պայմանները։

Մեր հասարակութիւնից է կախված նը-պաստաւոր դարձնել այդ պայմանները և ապագայ լաւ անդամներ պատրաստել իր համար։ Ներկայումս լաւ դաստիարակված իւրաքանչիւր անհատ շատ թանկ է մեզ համար, այդ անհատները թանկ կը լինեն նոյնպէս և շատ մօտիկ ապագայում. դրա համար առանձին խնամք և հոգածութիւն է պահանջվում մեր հասարակութիւնից՝ գլուխակցելու իր շահը և իր գոյութիւնը յարատևելու պայմանը, ձեռնամուխ լինելու մի շարք նորամուծութիւնների՝ այդ նպատակը իրագործելու համար։ Մեր հասարակութիւնը տակաւին կուլտուրապէս յետամնաց է և նրա հասարակական ըմբռնողութեան համար շատ բան նորութիւն է կազմում։

Ի հարկէ միայն դպրոցները չեն, որ պատանիներին տալիս են բարոյական, գեղագիտական և ազգային դաստիարակութիւն. դպրոցից բացի կան և օրիշ գործօններ, կան պատանիների խմբակցութիւններ, ամարային դպրոցներ, զբօսանքներ կազմակերպող մարմիններ, պատանիներին խելացի հաճոյք պատճառող միութիւններ և այլն և այլն։ Մեզ մօտ դրանցից և օչ մէկը հասարակական ոյժերով և նրա նախաձեռնութեամբ չէ կազմակերպվել. եթէ կան պատանիների ընկերակցութիւններ, նրանց մասին հոգացող մարմիններ, միութիւններ և այլն, դրանք մասնաւոր անհատների ջանքերով կազմակերպված գործեր են, այնտեղ հասարակութիւնը ինքն ամբողջ կերպարանքով՝ հանդէս չէ եկել։ Ահա այս է մեր իրականութեան տխուր կողմերից մէկը. մենք ունենք ուժեղ անհատներ, ունենք անվեհեր քաջեր, ունենք գործունեայ և շրջանկատ անտեսներ, բայց չունենք անվեհեր հասարակութիւն, չունենք կազմակերպված, գործունեայ և շրջանկատ հաւաքական մարմին, հասարակութիւն. մեր հասարակութիւնը մեծ մասամբ ամբոխ է, անհատներին երկրպագող կամ նրանց պախարակող, բայց խելացի, ձեռներէց, նախաձեռնող հասարակութիւն՝ չը կայ մեզ մօտ. և ամենից առաջ դրա պահանջն է, որ մենք զգում ենք թէ գիւղատնտեսութեան, թէ գրականութեան, թէ կրօնական, թէ ազգի անհատականութիւնը պահպանելու և թէ նոր սերնդի դաստիարակութեան վերաբերող հարցերը շօշափելիս. զգում ենք, որ անկազմակերպ է մեր հասարակութիւնը, որ վատ են գնում նրա նախնական գործերը, բայց և զգում ենք, որ այդպէս չէ կարելի շարունակել. պէտք է վերջապէս կազմակերպութեան ընտրացնել մեր հանրութիւնը։

Ներկայ դէպքում, չորս ամիս դպրոցական պատանիներին դաստիարակելու գործում ևս հրաապ ինդիրները կանգնած են մեր հասարակութեան առաջ և մատնացոյց են անում նրան հանրաշէն, հաւաքական գործի կարևորութիւնը։ Պատանիները, մեր հասարակութեան յոյսը, ապագան, իրանց պահանջներն են անում. անհատները չեն, որ պէտք է բաւարարեն այդ պահանջները. հանրութիւնը, համայնքները են հանդէս գալու, իրանց ցանկացած ուղիով տանելու են մատաղ սերնդի դաստիարակման գործը, ազատելու են նրանց փողոցի ազդեցութիւնից, ի զուր վատնելու չեն նրանց օսկէ ժամանակը, կազմակերպվելու են ամարային դպրոցիկներ, մեր մտաւորականութիւնը, երկու սեռի ինտելիգենտները ընդարձակօրէն մշակված ծրագրով գործի են անցնելու, պատանիների աշխատանքներն են ղեկավարելու, նրանց դաստիարակելու են ազգային ոգով, բարոյական սկզբունքներով և գեղարուեստական ճաշակով. այս գործը մանակի ընոյթ չը պէտք է ունենայ. նա լինելու է ընդհանուր բոլոր պատանիների վերաբերմամբ։

Այստեղ ինքն ըստ ինքեան առաջանում է այդ գործը կատարողների հարցը և մենք անցնում ենք ուսուցիչների խնդրին։

Էջմիածին — Գ. Տէր-Ռուբինեան

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

(Տպաւորութիւններ)

I

Ես էլ տեսայ նրանց։

Նրանց՝ բաղդից հալածված, կեանքի այդ խորթ զաւակներին... Ես էլ զգացի, այո, ամբողջ մարմնով, ամբողջ մարդկային էութեամբս զգացի այն սարսուռը, այն վիշտը, այն սարսափը, ինչ սարսափ որ միայն կարող է առաջ բերել մարդուս մէջ՝ մարդկային ամենածայրայեղ թշուառութիւնը...

Ասուած իմ, ովքեր են սրանք, ինչ դէմքեր են դրանք. ես մինչև այժմ դեռ այդ այլանդակված դէմքերը մոռանալ չեմ կարողանում. մինչև այժմ դեռ նրանք չեն անհետանում իմ յիշողութիւնից և երևի դեռ երկար կապրեն նրանք իմ մէջ։ Ոտաբոբիկ, դողդոջուն, գլխաբաց, ցնցոտիների և մի անպատմելի կեղտի և անմաքրութեան մէջ գտնվող այդ արարածների մէջ ես գտնէ մարդկային դէմքեր, դիմակներ էի որոնում... Եւ այդ՝ ինձ ու նրանց իրարից բաժանող մեծ անհաւասարութեան, տարբերութեան մէջ ինչը կարող էր մեզ յիշեցնել, որ մենք նման ենք իրար, որ մենք միևնոյն արարածներն ենք, որ մենք մարդիկ ենք. միայն և միմիայն մեր դէմքերը։ Եւ ես այդ դէմքերն էի որոնում այդ ցնցոտիների և կեղտի մէջ...

Բայց... Այդ դէմքերն էլ կերպարանափոխված էին, այլանդակված։

Երբէք, երբէք ես չէի տեսել մարդկային կերպարանքը այդպէս այլանդակված։

Իսկ երեխանե՞ը... Կեանքի այդ բողբոջները, ծաղիկները, մարդութեան ապագայ յոյսերը, կապած, յոգնած, անկենդան, անկենանք. նրանք ուղիղ նայում են ձեր աչքերին և, կարծէք, կենդանի դիակներ լինեն...

Խեղճ երեխաներ, դեռ չապրած, կեանքի սեն ու սպիտակը չը տեսած, կեանքի բաւականութիւնները դեռ չը ճաշակած՝ թօշնել, թառամել և թշուառութեան գիրկն էին ընկել...

Բայց չը նայելով այդ բոլորին, չը նայելով նրանց այլանդակված դէմքերին, չը նայելով այն մեծ անհաւասարութեանը, որ կար իմ ու նրանց միջև, որ կարծէք թէ ես իրաւատէր էի, նրանք իրաւազուրկ, ես հրամայող էի, նրանք կատարող, ես կուշտ էի, նրանք քաղցած, չը նայելով՝ ասում եմ՝ այս բոլորին, այնու ամենայնիւ կար մեր միջև մի ընդհանուր բան, մի ներքին՝ մեզ իրար հետ կապող, միացնող մի օղակ...

Այո, մենք արիւնակիցներ էինք, մենք հաւանում էինք իրար խօսքը, լեզուն. մենք հայեր էինք, մենք եղբայրներ էինք, մենք մարդիկ էինք...

II

Անցնում եմ Երևանում գաղթականների մօտով. գնում եմ հիւանդանոց՝ այնտեղի թշուառութիւնը տեսնելու։

Մօտովս վազում է մի փոքրիկ երեխայ կեղտոտ, գզգված, պատռտված հագուստով, հայ գաղթականի երեխայ. կանգնեցնում եմ նրան։

— Ո՞ւր ես վազում, փոքրիկ։

— Ջհաննամը,—ասում է ինձ փոքրիկը և վազում։

Քար եմ կտրվում տեղումս. սառում, ապշում եմ...

Բոլորովին չէի սպասում այդպիսի պատասխան. գուցէ անգիտակցաբար էր ասված, գուցէ մեծերից՝ ծնողներից լսված խօսքն էր կրկնում...

Բայց այդ բոլէին ինձ թւաց, որ արդարութիւնը, այո, իսկական արդարութիւնն էր խօսում, դուրս պրծնում անմեղ երեխայի բերանից։

Իսկապէս, որ «Ջհաննամ» էր այդ խեղճերի կեանքը, «Ջհաննամից» ու դժոխքից էին եկել նրանք. «Ջհաննամ» էին տեսել նրանց աչքերը, «Ջհաննամ» էին լսել նրանց ականջները...

III

Ես տեսայ նրանց նաև Էջմիածնում, Ղազարապատի հաստ պատերի տակ, արևի դէմ տաքանալիս. ես մօտեցայ նրանց. նրանք կուչ էին եկել հաւերի նման, կպել իրար, մի քանիսը պառկած էին, տնքում էին... երևի հիւանդներ էին...

Ես տեսայ նրանց դիւղերում, գոմերում՝ անասունների հետ...

Եւ ամեն տեղ նրանք լուռ, մունջ, անխօս, անբողոք. նրանք տանում են իրանց վիճակված այդ դառն բաժակը...

Այդ բոլորը տեսնելուց յետոյ՝ ես արտասուք էի օրօնում նրանց աչքերում. ես ուզում էի, որ նրանք բոլորը, բոլորը միասին բողոքեն, ձայն տան, լան, արտասվեն, դըժգոհեն, տրտնջան, գոռան, աղաղակեն. ես ուզում էի նրանց աղաղակը մինչև երկինք հասնի. և այդպիսով իրանց վրա հրաւիրեն կեանքի երջանիկների ուշադրութիւնը։

Բայց ի զուր էի ես օրոնում նրանց աչքերում արտասուքներ. նրանք վաղուց ցամաքել էին... արտասուքները այդպիսի թշուառութիւններին չեն բաւարարում...

Ի զուր էի ես բողոք, արտունջ, դժգոհութիւն օրոնում նրանց մէջ. նրանք վաղուց հաշտվել էին իրանց ճակատագրի հետ...

Ես հէնց միայն լսում էի նրանցից կըցկտուր հառաչանքներ, մրմռոցներ՝ «մեր հողը», «մեր տաւարը», «մեր երկիրը» և այլն։ Ձեր մայր հողից կտրված, ձեր երկրից պոկված ու չոլերն ընկած իմ դժբաղդ եղբայրներ, արդեօք Նախախնամութեան դարերի անէծքը կը փոխվի օրհնութեան, մի օր բաղդը կը ժպտա՞յ ձեզ էլ...

Աստրախան — Ս. Ք. Ասլանեանց

ՏԱՐԱԲԱՂԴ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ

—

«Ուրախութեան բաժակին մէջ դառնութեան մրուրը քամելն է մարդուս ճակատագիրը»—իրաւամբ ըսած է բանաստեղծը, և ահա այսօր, ով սուրի ու սովի, հալի ու ցուրտի, թշուառութեան և հալածանքի ենթարկուած իմ սիրելի ազգակիցներս, ճակատագրի անողոք հրամանաւ վիճակուած է ձեզի քամել ցմրուր դառնութեան ու վշտի բաժակը, թողով տունն ու տեղը, հաւն ու ճիւը, կովն ու հորթը, արտն ու անդաստանը, գառն ու մաքին, հօրենական նուիրական ու պաշտելի վայրերը, թափառած ցուրտի ու բուքի, ձիւնի ու բօրանի սպառնալիքին ներքև, բռնած սիրելիներու՝ կապոյտ կորած ձեռքերը, դեղերիլ սարէ սար, ձորէ ձոր, գիւղէ գիւղ ու քաղաքէ քաղաք, անօթի, բոբիկ ու մերկ։ Գիտեմ, ով իմ կեղեքուած ազգիս ժիր ու անխոնջ մշակը. գիտեմ. այդ արդահատելի ու անանախանձելի վիճակիդ մէջ իսկ՝ կարի դժուար, մահու չափ ծանր կուգայ քեզի յաւէտ տալու, անինոյ տալու վարժուած ձեռքդ, վզիկդ ծուռ, կարկառել քանի մը կօպէկի, ոգեպահիկ փշուր մը հացի և կտոր մը զգեստի համար և առ այդ դիդերիլ «աղքատախնամ», «նպաստամատոյց», «կեդրոնական» և ապակեդրան վարչութեանց դրուներուն առջև և օրմերուն ներքև երկար ժամերով... և, ա՜հ, բաղում անգամ հանդիպիլ ժլատ ձեռքերու, խոժոռ նայուածքներու, սիրտ ծակող ու արժանապատուութիւնը վիրաւորող «փախստակա՞ն ալ արժանապատուութիւն ունի եղեր» դիտողութիւններու և կշտամբանքներու։ Բայց մի՛ վհատիր, սպասէ, յուսալից սպասէ. ողորմած է Աստուած, վերջ կը գտնեն այդ տխուր օրերը. սևակոյտ ամպոց ետև արեգակը կայ թաղնուած. այդ՝ սարսափ ազդող կուտակուած ամպերը բարիք պիտի տեղան. և այսօր «բողբոջը թէպէտ դառն երևի, ծաղիկն անոյշ կըլլայ»։ Ա՜խ, գիտեմ, շատ, շատ դարդեր ունիս այն արևակէզ կուծքիդ ներքև, և ակօսուած ու խանձուած ճակատիդ մռայլը սրտիդ անվերջ փոթորիկը կը մատնէ. բայց յիշէ թէ դու բազմաչարչար ազգի մը յօշոտուած շառաւիղն ես, վշտաբեկ քնարին բեկբեկ լարը. դու հողմակոծ ազգի մը ալեկոծուած բեկորն ես խուրթերու մէջ խորտակուած, բայց ոչ իսպառ կորսուած դատապարտուած։ Դու պանծալի անցեալ մը և նախանձելի պապերու ու քաջերու յիշատակներով օժտուած ազգի մը շառաւիղն ես։ Հայը դարերով հալածուած, տարրերէ ի վեր բռնապետներու պիղծ ձեռամբ անդամահատուած, բայց առ յաւէտ կենդանի մնացած, իր գրանիտեայ կուրծքը անվեհեր, բարձրաբերձ և գոռացող կոհակներուն տուած ու յաւէտ զանոնք արհամարհելով փշրած և մինչև այսօր հասած է և յետ այսու ալ ապրելու և իր գոյութիւնը պահելու ամեն յոյս կը կրէ յիրեքան։ Ներկայ երկունքի օրերը փրկութեան երկունքներ են. ճչ ապաքէն ամենամութ խաւարը արշալոյսի ծագման նշանն է։

Քաջալերուէ. ցորչափ հայը կապրի, և դու պիտի ապրիս. ահա մամուլները կը ճռնչեն ծալ ցաւերդ ամօքելու. և աշխարհի ամեն ծայրերը տարածուած եղբայրներդ ու քոյրերդ այնչափ պարտաճանաչ զգացումներով ոտքի կանգնած ու ձեռք ձեռքի տուած՝ քրտինքի արդիւնք եղող բուրլինեռով և զոլարներով կը ձգտին քանդուած օջախդ վերաշինելու։

Անոնք մօտիկ ու հեռու, շատ հեռու երկիրներէն ու քաղաքներէն իրենց եղբայրական ձեռքերը երկնցուցած են մեղմելու քու վիշտն ու թախիծը. սրբելու արտասուքներու հեղեղը և դնելու խորունկ վէրքերուդ վրայ բուժիչ բալասանը։ Տէրը վարձահատոյց լինի անոնց։

Քաջալերուէ, զի երբ խաղաղութեան գունագեղ ծիածանը թուրք ամպոց մէջ կամար կապէ, դու, ով իմ սիրելի ազգիս կենսական երակը եղող շինական, քանդուած ու ամայացած օջախիդ շէնական վրայ նստած, ձագուկներդ շուրջդ բոլորած, կրկին պիտի խմես պապենական անխարդախ թանդ։ Պիտի առաջնորդուիս ջրաշատ և հովասուն «եղիմին». յայնժամ պարպուած գոմերդ լեցուին պիտի ոստոստող գառներով և ուլերով և մայող ոչխարներով, բառաչող կովերով և ժրաջան եզներով։ Շուտ պիտի ծագի այն երանաւէտ օրը, յորում կրկին ճակատիդ արդար քրտինքով օծուած արտերուդ փշապատ ու սէզապատ կուրծքը պիտի ճեղքէ սուր արօրը, պիտի խնկաբուրուին անոնք ատոք հասկերով և պիտի շողայ գերանդին ոսկի ծղօտներուն մէջ։ Թռչնոց առաւօտեան դայլայլիկներու հետ պիտի լսուի և քու մեղանչոյ և հոգեգրաւ երգը և պիտի արձագանգեն կանաչապատ բլուրները լեցուն ոսկեգիսակ օրանոցով ծանրաբեռնուած սայլերու անվերջ ճռռումները։ Պիտի կանգնեցնես ու չէնցնես անգութ ու պիղծ ձեռքերով քանդուած բոյնդ. կրկին լեցուին պիտի դատարկացած ամբարներդ մաքուր ցորենով ու գարիով, կարաներդ իւղով, կորկոտով ու պուլղուրով և կարմիր գինիով. տեսնես պիտի կալերուդ մէջ ցորենի և գարիի շեղջեր, օրանցմէ ներկայի դատարկ մնացած ձեռքերովդ առատ բաժին պիտի հանես շարան-շարան եկող տանտեակ մը աղքատներուն... և ասպնջական յարկիդ ներքև պարտասած ու յոգնած անօթի ճամբորդը կրկին պիտի վայելէ հարուստին ու քաղաքացիին երեսը շիկնցնող աւանդական հիւրասիրութիւնդ։ Պիտի նորոգուին քանդուած կաթողիկէներդ և այրերացաւեր եկեղեցիներդ. բարեպաշտներդ եկեղեցի հրաւիրող զանգակի ղօղանջիւնը գամ մնա պիտի թնդացնէ օդը, և տաճարներդ պիտի արձագանգեն սրտաբուղխ աղօթքները և երգերը, և հայի Աստուածը պիտի ժպտի՞ երկնից բարձրութենէն։

Արդ, յուսա և սպասէ, չէ՞ որ յոյսը թշուառաց կեանքն է։ Արշակ Պ. Հիւսեան

Դարաղալա

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սպաճուրիւճներ

Դալաչա, 2 ապրիլի

Տաշ-Սալահլու թուրք գիւղում 17—18 տարեկան մի երիտասարդից տուգանք են առնում։ Սա՝ վրէժից դրդված՝ մի օր ուռենու ճիւղերը կտրատում և իշի վրա է դնում, հրացանն էլ շորում փաթաթում և ճիւղերի մէջ ամրացնում ու գիւղից անցկատելի կերպով դուրս է տանում։ Առաջուց տեղեկացած լինելով որ իր հակառակորդները գնացել են ոչխարի մօտ, նա գիւղից դուրսը մի ձի է գտնում, վրան նստում է, իշին այնտեղ թողնելով, ու շտապում։ Մօտենալով իր հակառակորդներին՝ պատանին իմաց է տալիս իր անելիքը։ Հրացանը բացվում է, մէկը գետնին է ընկնում, երկրորդ զնդակով երկրորդն է սպանվում, ապա երրորդը և չորրորդը։ Ոճիրը գործելուց յետոյ՝ նա ձի նստելով այդտեղից փախչում-հեռանում է՝ ահագին տարածութիւն անցնելով, գիշերում է Կոթի գիւղի ձմերանոցներում և ապա անյայտանում։ Առ այժմ դեռ չէ ձերբակալված։

Ֆօրստէր

—

Գիւղի կեանքից

Շնող գիւղ, 6 ապրիլի

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ գիւղացիութիւնը, որի մատաղակերպի մասին մեր «կաբինետային մատաղութիւնը» այնքան շաբլօնային անդաստ գաղափար ունի կազմած, իր ամենանեղ դրութեան ժամանակ անգամ գիտէ ոչ միայն թշուառութեան միջից իրանից էլ աւելի թշուառին օգնութեան ձեռք մեկնել, այլ և իր զաւակի կրթութեան և հասարակական ընկած դրութիւնը բարւոքելու մասին հոգալու ժամանակ ևս գտնել։ Այս մասին օրինակ կենդանի ապացոյց մեզ կարող է ծառայել թէ գիւղերում անտէր-անտիրական մնացած բազմաթիւ ընտանիքների վերաբերմունքը և թէ մանաւանդ պատերազմի գնացած զինուորներից ստացվող նամակների պարզ բովանդակութիւնը։ Այդ նամակագիրները յայտնում են, որ «իրանք շատ լաւ են, իրանց մասին բոլորովին չը մտածեն, աշխատեն պարզեցնես երևալ հասարակութեան մէջ և հէնց անեն, որ ըրէքէն անգիր սովորել չը մնայ» և այլն... «Մենք միայն տըխուր ենք լինում,—ասում են նրանք,—որ ձեզանից նամակներ շուտ-շուտ չենք ստանում, որ խմանանք ձեր օրպիսութիւնը և միամտվենք։ Գրեցէք տենանք գիւղումը ինչ կայ, խու էլ գողութիւն չի ըլում, ինչ ա մեր խալիսը» և այլն...

Մի կողմ թողնենք այդ նամակներում շօշափված միւս խնդիրները և կանգ առնենք թէկուզ հէնց դպրոցականի վրա։ Ունենք դպրոցական կիսատ շինութիւն, հասարակութիւնը, չը նայելով ներկայ պայմաններին, ամեն ջանք գործ է դնում աւարտելու այն։ Իսկ մինչ այդ, գիւղական ծխական դպրոցը իր գոյութիւնը քարշ է տալիս մի խոնաւ և անպէտք տան մէջ։ Հոգաբարձութեան անդամները իրանցից անկախ պատճառներով դուրս են եկած կազմից և հոգաբարձութիւն համարեա թէ գոյութիւն չունի, հետևապէս գոյութիւն ունեցող դպրոցն էլ զուրկ է իր մասին հոգացող պաշտօնական յատուկ մարմնից։

Ունենք սակայն թեմական տեսուչ, որի ներկայութիւնը թէ կը խրախուսէ ժողովրդի դէպի նման կուլտուրական գործերը ունեցած եռանդը և թէ կը վերացնէ յիշած դէֆիցիտները։ Սակայն դպրոցական տարին արդէն վերջանում է, բայց տեսչի երեսը այս տարի մեր և հարևան գիւղերը դեռ չեն տեսել։

Այս վերջին օրինակը ես առաջ բերի ոչ թէ տեսչի անձնաւորութիւնը վիրաւորած լինելու նպատակով, ոչ, ես միայն ուզում էի ասել, որ եթէ մեր ժողովրդի շահերին ծառայելու կոչված գոյութիւն ունեցող հասարակական մարմինները իրանց ստանձնած պարտականութիւնները կատարէին կարգի-նէմանից դուրս, ժողովրդի մէջ, մեր ժողովրդական-հասարակական գործերը շատ և շատ անգամ առաջ կը լինէին անցած և մենք էլ թերևս մեր գիւղացիութեան մասին մանաւանդ այնպիսի նամոզմունք չունենայինք, ինչպիսին է ներկայիս։ Գիտեմ, պէտք է իսկոյն առաջ բերվեն «տիրող պայմանները», բայց քանի որ «տիրող պայմանների» մէջ հնար կայ դպրոց պահել, ուրեմն պէտք է և նրան տէրութիւն անել, առաւել ևս՝ երբ նա ունի իր յատուկ պաշտօնավարը։ Բ. Մկրտումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր, Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը մեկնում է Միխայլովօ գիւղը, ուր ամսիս 12-ին, այնտեղ պատրաստ մատուցելուց յետոյ, տեղի է ունենալու տղայոց նոր գիմնազիայի հիմնարկէքը։

◆ Թոքախտի դէմ մաքառող Կովկ. Ընկ., անցած տարիների օրինակով, ապր. 20-ին կազմակերպում է «Սպիտակ ծաղկի օր»։ Հանգանակած դումարի մեծագոյն մասը յատկացվելու է չքաւոր երեխաների համար մանկական գաղութ պահելու գործին, որը հաստատվելու է Աբաստումանում կառուցվող սանատորիայի մէջ։

◆ Պետրոգրադից Թիֆլիս հասաւ յատուկ վիրաբուժական մի հիւանդանոց՝ Գահաժառանգի անունն, որը կահաւորված է կայսրութեան հոգւոր դպրոցների միջոցներով։ Հիւանդանոցի ծառայողների ամբողջ կազմը ներկայացաւ էկզարխին, որը նրանց խաչը բաժանեց։ Էկզարխի կարգադրութեամբ նրանք բնակվելու են առայժմ հոգւոր դպրոցին կից, իսկ մի քանի օրից յետոյ մեկնելու են առաջապահ դիրքերը։

◆ Ուղղափառ հոգւոր դպրոցին կից, ուր մի ժամանակ տեղաւորված էր դպրոցի հիւանդանոցը, Կարմիր Խաչի Ընկ. կահաւորել է մի հիւանդանոց գթութեան քոյրերի համար, որը արդէն օծված է և ընդունում է հիւանդներ։ Հիւանդանոցում ծառայում են մի բժիշկ, 2 գթութեան քոյր և 2 սանիտար։

◆ Վաղը, ասորի փախստականներից 168 հոգի ետ են ուղարկվում Սալմաստ իրանց նախկին վայրերը։ Քաղաքային յանձնաժողովը աշխատում է օրքան կարելի է շատերին ետ ուղարկել։

◆ Կ. Լիսիցեանը դիմել էր ուսումնական վարչութեանը՝ խնդրելով իր հիմնած պրոգիմնազիան դարձնել գիմնազիա։ Այդ խնդիրը քննվել էր կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի խորհրդի մէջ և միաձայն որոշված էր հարկ եղած միջնորդութիւնը յարուցանել։ Այժմ ստացվել է հոգաբարձուի միջոցով փոխարքայի թոյլատուութիւնը, որով պրոգիմնազիան վերածվում է լրիւ 8-դասարանեան գիմնազիայի՝ տղայոց և աղջկանց միատեղ ուսուցումով և տղայոց կլասիկական գիմնազիաների դասընթացքով։ V-ից սկսած նոր դասարանները պիտի հետզհետէ բացվեն, իւրաքանչիւր տարի մէկը։ Շրջանաւարտներից տղաները ստանում են բոլոր այն իրաւունքները (ատիճան ստանալու, զինուո-

բաղրութեան, համալսարան մտնելու և այլն), ինչ որ տալիս են պետական գիմնազիաները, իսկ աղջիկներին արվում են աղաչոց գիմնազիայի IV, VI և VIII դասարանների վկայականները։ VIII դասարանի վկայականը հաւասար է հասարակութեան առաջնորդական դպրոցի դասընթացքի։

✦ Երեկ Նաթալուղի հիւանդանոցում վիրաւոր և հիւանդ զորականների զուարճութեան համար տեղական սիրողները կազմակերպեցին մի համերգ։

✦ Գիշերային ապաստարաններին հսկող քաղաքային գործադիր յանձնաժողովը միջնորդել է քաղաքային վարչութեան առաջ՝ ապաստարանները ախտահանելու համար երկու գործիք ձեռք բերել։

✦ Այսօր, ամսոյ 11-ին, երեկ. ժամը 8-ին, Հասարակական ակումբում կարդացվելու են երկու բեֆերատ. Վ. Ի. Շամսով կը կարդայ «Зарубежная Русь» նիւթի մասին, իսկ Ն. Վ. Վոլկով՝ «Отраженіе войны въ современной лирикѣ» թեմայի մասին։ Բեֆերատներից յետոյ կը լինի զրոյց։

✦ Սացանք «Վիլհելմ և ուրիշ պատմուածքներ» Գիժի, էջ 32, գինը 15 կ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

II

Բոսֆորը Թիֆլիսում

Սովորական, «Մի բաժակ թէյ» անունը կրող բարեգործական սրճարանում է ցուցադրված պ. Բաշինջաղեանի մի մեծ, իւղաներկ պատկերը, որ կոչվում է «Բոսֆոր»։ Այդ պատկերը յարմարեցված է մի «խաւար սենեակում» (Camera obscura) և լուսաւորված է էլեքտրական կանաչաւուն լոյսով։ Էֆֆեկտն աւելի ուժեղացնելու համար՝ պատկերի առաջ, յատակի վրա, մի սաժէնաչափ տեղ աւազ է լցված և ներկայացնում է պատկերի առաջին պլանի շարունակութիւնը՝ ափը։ Ծովափին կան նաև իսկական պարան, ուրիշ առարկաներ և մի պառկած թիւրք (մանեկեն և այլն)։

Նպաստում են այս արհեստական հանգամանքները յարդելի նկարչի վրձինի արդիւնքն աւելի հարազատ պատկերացնելուն և իլլիւզիա ստեղծելուն. ոչ այնքան, պատասխանում ենք մենք. նախ այն պատճառով, որ կամերան պէտք է աւելի արպեղաձև լինէր, ինչպէս ստերեսկոպի արկղները, որպէս զի պատկերը դիտողի աչքերին չը յառէին պատերը, թէկուզ սև պաստառով պատած. երկրորդ՝ տեսողութեան շրջանը (поле зрѣнія) պէտք էր աւելի լայն վերցնել. և երրորդ՝ պատկերի ծովափը և սենեակի յատակին լցված աւազը անկիւն են կազմում ու չեն նկատվում շարունակութիւն, մինչդեռ պէտք էր աւազը լցնել թեք, դէպի պատկերը աստիճանաբար բարձրացող։

Թոյլ ենք տալիս մեզ նկատելու նաև, որ ի զուր է Բոսֆորի պատկերը կոչված և յայտարարված «դիորամա». դա դիորամա չէ, այլ սովորական պատկեր, ինչպէս պ. Բաշինջաղեանի միւս պատկերները, և շինած է իբր «պանորամա»։ Դիորամա կոչվում են այն տեսակի պատկերները, որոնք նկարվում են թափանցիկ մակերեսոյթի վրա, յաճախ երկու կողմից և մոգական լապտերի նման՝ լոյսը պատկերի վրա արձակելով, ֆոնը կորսվում է և առարկաները դուրս ցայտում տալով կատարեալ իլլիւզիա։

Բայց այս արտաքին հանգամանքների մասին խօսելով՝ ոչ միայն չենք ուզում քննադատելի դարձնել անուանի նկարչի բուն գործը, պատկերը, այլ ուզում ենք ասել, որ նա այնքան յատուկ է գեղարուեստագէտի վարպետ վրձինին ու գեղեցիկ, որ կարօտ չէր նման արհեստական օժանդակութեան և դեկորացիաների։ Արուեստը և գեղեցկութիւնը հասկացող մարդն ստիպված է ձեռքերը օդակաձև բռնել աչքերի շուրջն ու այնպէս նայել՝ որ չը տեսնի պատկերի աւելորդ շրջապատը, այլ երկիր, երկար նայէ ու զմայլի «Բոսֆորով», լուսնի հմայիչ լոյսով, թեթև ամպերով ու Բաշինջաղեանի պատկերներին յատուկ առատ օդով։ Այնտեղ հանդիստասը կը տեսնի Ստամբոլը և աղօտ լոյսի մէջ հսկայի պէս բարձր կանգնած Այա-Սոֆիան, սքանչելի Ոսկեղջիւրն ու նրա ափերում պլպլացող ու հայելանման ջրերում անդրադարձող ճրագները։ Ահա այդ ֆոնի վրա մթին է տալիս Թիւրքիայի ծովային օյժի պարծանք «Գոեբէնը»։ Հեռուից, պատկերի յետին պլաններում են պոլսական գեղեցիկ արուարձանները որ մի լուռ ներդաշնակութիւն կազմում գիշերային անդորրութեան մէջ։

Արժէ որ հասարակութիւնը ի տես գնայ Թիֆլիսի Բոսֆորին։ Գ. Լևոնեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

Ժողովածու Դիպլոմատիական Փաստաթղթերի։ Բէֆորմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ցմայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի միներ։)։

XXVIII

Նարնջագոյն Գրքի 140-րդ գոհարը Սաղոնովի հեռագիրն է դեսպանի պաշտօնակատար Գուլկեվիչին, 1914 թ. յունվարի 18-ին, որով յայտնում է, թէ վախ կայ, որ Թիւրքաց կառավարութիւնը գաղթականութեան միջոցով ստեղծի Հայաստանում մուսուլման մեծամասնութիւն։ Եւ դրա համար է, որ բացասաբար պէտք է վերաբերվել համեմատականութեան սկզբունքին և գերադաս համարել ազգութիւնների ներկայացուցիչների օրոշ փոխ-յարաբերութիւնները ընդհանուր խորհուրդների մէջ։ Մինիստրը կցում է, որ յայտնել է Թիւրքաց դեսպանին (Պետրոգրադում), թէ պնդում է Սըվազ, Խարբերդ և Դիարբէքիր վիլայէթների վերաբերմամբ այն բանաձևի վրա, որ բացատրված է իր յունվարի 15-ի հեռագրի մէջ։ Ինչ վերաբերում է Երզրումի վիլայէթին, նա տուել է հետևեալ պահանջը. «Երզրումի վիլայէթում ընդհանուր խորհրդի ընտրական անդամները այժմ իսկ, առանց սպասելու վիճակագրութեան, պէտք է ընտրվեն կէսը մուսուլմաններից, կէսը ոչ-մուսուլմաններից»։ Ընդ նմին մինիստրը յայտնել է, որ Ռուսաստանը ծայրագոյն զիջումները արդէն արել է և այլևս ոչ մի զիջումն անել չէ կարող։

141-րդը՝ Գուլկեվիչի հեռագիրն է Սաղոնովին, յունվարի 20-ից, որով յայտնում է, թէ ինքը յայտնել է մեծ վէզիրին, որ ինքը լիազօրված է վերջնականապէս խմբագրել համաձայնութիւնը այն պայմանով, որ Երզրումի վիլայէթում «անմիջապէս» մտցվի հաւասար ներկայացուցչութիւն, ինչպէս է Վանում և Բիթլիսում, իսկ Խարբերդի, Դիարբէքիրի և Սըվազի վիլայէթներում հայերի համար անմիջապէս պէտք է ապահովվի 1/3 տեղ ընդհանուր խորհուրդներում։ Մեծ վէզիրը, որ արդէն տեղեկացել է այդ մասին օսմանեան գործերի հաւատարմատարի հեռագրից, յուզման մէջ է եղել։ Նրան առանձնապէս վշտացրել է կայսերական կառավարութեան այն մինիմում վստահութեան բացակայութիւնը, առանց որի անհնար է, նրա ասելով, ոչ մի բանակցութիւն, ոչ էլ համաձայնութիւն պետութիւնների միջև։ Սայիդ-Հալիմը յայտնել է, որ Թիւրքաց կառավարութեան համար էլ հնարաւորութիւն չը կայ յետագայ զիջումներ անել, որովհետև նա չէ կարող իրան արդարացնել պ-լատների առաջ։ Այդ պատճառով Սայիդ-Հալիմ խնդրել է յայտնել մինիստրին, որ սա այդ խմբագրութեամբ ընդունի ծրագիրը, և մատնացոյց է անում, որ բեֆորմների դանդաղեցումը իր վրա յարուցանում է մեղադրանք մեծ պետութիւնների անբաւականութիւնը։

142-րդը՝ դարձեալ Գուլկեվիչի հեռագիրն է Սաղոնովին, յունվարի 20-ից, որով յայտնում է, թէ մի քանի պետութիւնների ներկայացուցիչներ անհամակրութեամբ են վերաբերվում ռուս կառավարութեան, նրանց ասելով, երկրորդական նշանակութիւն ունեցող պնդումներին, ինչպէս օրինակ հայերին երեք վիլայէթում երրորդ տեղը տալու հարցին։ Այդ պատճառով, Գուլկեվիչը յայտնում է, թէ ինքը չի օգտվել իրան տրված իրաւունքով՝ մատնանշել Թիւրքերին, որ հնարաւոր է, որ իրանք կը վերադառնան նախկին ծրագրին։ Վերջում Գուլկեվիչը յայտնում է, որ եթէ կայսերական կառավարութիւնը որոշի ընդհատել բանակցութիւնները, այդ ժամանակ, ի հարկէ, ձեռնտու կը լինի իրանց՝ առաջ քաշել նախկին ծրագիրը իր ընդարձակ պահանջներով։

(Կը շարունակվի)

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՊՕՂՈՍ-ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ

Հայրենակիցներ,

Պարաք կը սեպեմ սրտագին շնորհակալութիւն յայտնել նախ և առաջ բոլոր հանգանակիչ մասնախումբերուն և բարեսիրտ նուիրատուներուն, որ, ամեն կողմէ և մինչև իսկ հեռաւոր երկիրներէ, պատասխանեցին մեր կոչին՝ ի նպաստ Կովկաս գաղթող կարօտ ազգայիններուն, և փութացին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ղրկել հաւաքուած նպաստները, որոնց համագումարը մեր ակնկալութիւնը գլած է։

Արդէն ցարդ ստացանք և հեռագիրով Թիֆլիս ու Էջմիածին ղրկեցինք 60,000 ռուբլի (շուրջ 6000 օսկի) և միւս կողմէ զանազան առաքումներ ևս ծանուցուած են մեզի, որ նոյնպէս պիտի գան աւելնալ յիշեալ գումարին վրայ, միևնոյն նպատակին յատկացուելու համար։

Բայց այս գեղեցիկ արդիւնքին առջև, որոշուեցաւ փակել Միութեան կողմէ բացուած սոյն հանգանակութիւնը, նկատի առնելով որ ներկայ ծանր իրադրութիւնները, որոնց հանդէպ հայութիւնը կարող չէ անտարբեր մնալ, պիտի հարկադրեն, ինչպէս պէտք է նախատեսել, նորանոր զոհողութիւններ ևս. մանաւանդ որ բազմաթիւ նուիրատուներ, ինծի ղրկելով իրենց նպաստները, ցաւ յայտնած էին, որ բացուած հանգանակութիւնը միայն Կովկասի գաղթականներուն սահմանափակուած է, և այդ առթիւ՝ աւելի ընդհանրական հանգամանք ունեցող հանգանակութիւն մը բանալու գաղափարը կը թելադրէին ինծի։ Այդ նպատակով է որ իմ նախագահութեանս ներքև նոր յանձնախումբ մը կազմուեցաւ տեղւոյն ազգային շահերու պաշտպանութեան գործին յատուկ հանգանակութեան ձեռնարկելու համար, Հայկական Ընդհանուր Միութենէն զատ,—որովհետև հետապնդուելիք նպատակը այս բարեգործական ընկերութեան գործունէութեան սահմաններէն դուրս կը մնայ, այնպէս ինչպէս որ իր հիմնական կանոնագրին մէջ նախագծուած է։

Նորակազմ Հանգանակիչ Ծանձնախումբը, օրուն հաճեցան նաև մասնակցիլ Եգիպտոսի հայ հասարակութեանց երեք հոգւոր պետերը, իր ներկայ կազմութեամբը կը կարծէ պատասխանել պէտքի մը, որ ծնած է քաղաքական ներկայ կացութենէն, և որ կը պահանջէ անխարապէս բոլոր հայերու համագործակցութիւնը այս բաղդորոշ րոպէին, երբ մեր ազգին ապագան խնդրոյ նիւթ է և իր ճակատագիրը պիտի վճռուի։

Երբէք մեր պատմութեան մէջ ասկէ աւելի նպաստաւոր պատեհութիւն մը ներկայացած չէ, և երբէք մեր ազգային ցանկութիւնները իրենց իրականացումին աւելի մօտ չեն գտնուած։ Բայց անհրաժեշտ է ասոր համար, որ ամեն մասնաւոր նախաձեռնութիւններ կեդրոնացուին ազգային շահերու պաշտպանութեան համար, որպէսզի կարելի ըլլայ անոնք համերաշխել ու այսպիսով ապահովել գործողութեանց միութիւնը։

Յարմէհետէ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի վստահութեամբ հրաւիրուեցայ ազգային հարցով զբաղուելու, իմ պատուական հայրենակիցներս ինծի նկատմամբ իրենց համերաշխութեան ոգին և ազգասիրութեան ապացոյցները այնքան աղնուօրէն տուին, որ հիմա չեմ կրնար կասկածել թէ՝ աւելի արտանց պիտի հաշխատին անխախտ և սերտ պահելու միութիւնը, որուն ապացոյցները արդէն տուին՝ բարենորոգումներու համար բանակցութիւններ կատարած միջոցին,—ամեն տարբերու և կուսակցութեանց միութիւնը, աւելի քան երբէք անհրաժեշտ, մեր դատին վերջնական յաջողութեան համար։

Ներքին համոզումը ունիմ որ ամենքն ալ ինծի նման կը զգան ծանրութիւնը՝ ինչպէս և կենսական բաղդորոշ կարևորութիւնը մեր պատմութեան ներկայ ժամուն, ուր իրաւունք ունենք յուսալու թէ՝ մեր ազգային արդար ցանկութիւնները պիտի ունենան ընդհուպ այն լուծումը, որուն ամեն հայ կը բաղձայ։ Պողոս Նուբար

Կահիրէ, 15 մարտ

Կը խնդրուի անուանս ուղղել բոլոր թղթակցութիւնները յետագայ հասցէով՝ Boghos Nubar pacha, Héliopolis (Egypte), իսկ դրամական առաքումները՝ կամ ուղղակի իմ անուանս, և կամ Crédit Lyonnais դրամատան Կահիրէի ճիւղին՝ Ազգային Հանգանակութեան հաշուոյն (au compte de la Souscription Nationale Arménienne*)։

*) Ծան.—Եգիպտոսի մէջ վսեմ. Պողոս Նուբար-փաշայի նախագահութեամբ կազմուած Հանգանակիչ Ծանձնախումբին կը մասնակցին՝ Եգիպտոսի առաջնորդ դիր. աէր-Թորգոմ եպ. Գուշակեան, հայ-կաթոլիկ առաջնորդ արհ. աէր-Յովհ. Գուզեան եպ., հայ-բողոքական հովիւ վեր. Հ. Խանդամուր, տեսուչ Գէորգ Թոփալեան, Արժանակ Կամսարական, Բիւզանդ Մասրաֆ, Լևոն Մկրտիչեան, Յովհաննէս Մուրատեան, Գէորգ Սարգիսեան և Օնանիկ Տիրատուր։

Եգիպտոսի նուիրատուութիւնները ուղղել Հանգանակիչ Ծանձնախումբի գանձապետ՝ տիար Բիւզանդ Մասրաֆի, Avenue des Pyramides, Guizeh.

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

Ռանգուն, 8 մարտ (Ն. ա.)

Մի քանի անգամներ տեղիս եկեղեցում հանդիսաւոր պատարագ և մաղթանք ենք կատարել երբեակ համաձայնութեանց և նրանց դաշնակից ազգերի քաջարի զօրքերին փառաւոր յաղթութիւններ շնորհելու համար։ Նոյնպէս փետր. 21-ին (Ն. ա.) հոգեհանգիստ ենք կատարել անգլ., ռուս., ֆրանս., բելգիացոց, սերբ. և հայոց այն զօրքերի համար, որոնք արդարութեան և ազատութեան պատերազմում՝ հերոսաբար ընկել են կռուի դաշտի վրա։

„Armenien Relief Fund“ անուան ներքոյ հանգանակութիւն է արվում. մինչև այժմ հանգանակված է 3600 ռուբլի։

Վահան Ք. Աղանեան

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բաղու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բաղուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բաղուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Զօրանցօվի արձանի հանդէպ)

Ամեն or, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի Ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծանկահատ.։
Մ. Մ. ՌԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. սկանջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ե. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեչ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծանկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻԶՆ ՏԷՐ-ԳԵՈՐԳԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ՌԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համաձորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդասցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—58

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Սակաւաթիւ օրինակներ հետեւեալ հրատարակութիւններից

1) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Գր. Արծրունու, գ. 20 կ.
2) ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ, др. Гр. Арцруни, переводъ А. Аракелянца. գ. 25 կ.
3) DIE HUNGERSNOTH IN TURKISCH-ARMENIEN, von dr. Gr. Arzruni, übers. von A. Amirchanjanz գ. 20 կ.
4) ВОСТОЧНЫЙ ВОПРОСЪ, др. Гр. Арцруни գ. 05 կ.
5) ЭКОНОМИЧЕСКІЯ ПЕРСПЕКТИВЫ ВОСТОЧНОЙ АНАТОЛІЙ, Ал. Калантаръ գ. 25 կ.
6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, Գ. Տէր-Ռուբինեանի, գ. 20 կ.
7) ՀԱՅԿ. ԽՆԴԻՐՆ ԵՒ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ՀԱՅՈՑ, Ա. Սարգսեանի գ. 2 ր. 50 կ.
8) ՀԱՅՔ Ի Կ. ՊՕԼԻՍ 20-Դ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ, Արծրունու, գ. 25 կ.

Վերոյիշեալ գրքերից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(7) 0—2

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթանէս, I և II հատորները . . . 1 ր. 50
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . 40
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր. 20
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մելիքթարեանի . . . 40
5) ԱՐԵՒԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . 15
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի . . . 50
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի . . . 1 ր.
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . . 40
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի . . . 40
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի . . . 35
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՇՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . . 15
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի . . . 15
13) ՄԻԼՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . . . 30
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . . . 25
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՄ, Մակ. եպ. Բարխուդարեանի . . . 80
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. . . . 1 ր. 50
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլերի, թարգմ. Իս. Յարութիւնեանի. . . . 40
18) ՓԱՐԱՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի. . . . 15
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . 20
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՒՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շեխանի . . . 20
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շեխանի . . . 25
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի . . . 20
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբինեանցի . . . 10
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զօնցի . . . 3

Ներքոյ, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%.
(6) 0—7

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում գրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառներ։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կապել մել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՏԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՑՍ-ԿՈՒՐԱՆՑԻ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆոն № 67.

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են հետեւեալ հրատարակութիւնների

1) ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Լազարեանի . . . 1 ր. 50
2) ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, Հ. Յակոբեանի . . . 50
3) ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, Ս. Գրիգորեանի . . . 50
4) ՀԱՅՐԵՆԻՔ ՀՈՂԸ, վեպ Հանրի Բորդոյի, թարգ. Հ. Առաքելեանի . . . 60
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . 50
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սալիերի, թարգ. Իս. Յարութիւնեանի . . . 50
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մոպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր.
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ց. Սօլովեանի . . . 40

Ներքոյ, որոնք յիշեալ գրքերից մի-մի բրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ։ Ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 0—6

Մի ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
հայ ընտանիքում վարձով տրվում է

ՄԻ ԿԱՄ ԵՐԿՈՒ ԿԱՁԱՒՈՐՎԱԾ

ՍԵՆԵԱԿՆԵՐ

ճաշով և առանց ճաշի։ Նոյն տեղը պատրաստում են աշակերտ - աշակերտուհիներ գիմնազիաների բոլոր դասարանների համար։

Հասցէն՝ Графская ул. № 7, վերին յարկ.
(4.) 225. 3—1

Ծախվում են

1) «ՎԵՆՆԻԱԿԱՆ ԵՒ ԳԱԼԷՏԻ ՅԱՐԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բէյեպարով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախապարապմունքներ շուրթեան կանոնները արիպէրով և այլ ցուցերով չը պարզվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրատական արիպէրի և բժշկութեան մասին, բէյեպարներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՈՂԵՒՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն սակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնութիւն։ Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Ձար պարտ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք զրպանի համար, և ամեն յարդ կարող է ինքնուրոյն հասցնել թէ իրա և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՅԿՃՈՒՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ նկարներով ու պատկերների ժողովածու։ Ծիծաղաշարժ տեսարանի պատկերը ջրքի երեսին։ Գինը 20։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ԶԱՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻՐՔ ՆՈՒԷՐ

երեք հետեւեալ գրքերը. 1) «Կնիկարմատ շալվարի ծիծաղաշարժ վեպվել շափահասների համար (գինը 20 կ.), 2) «Բաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Մի նոյն գաղտագողա», պատմուածք հայ-թուրքական կռիվներից, դիպվածների նկարներով, գինն է 7։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէտքէվոլով։ (Մարկիներ չդնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ։ Հասցէն՝ Тифлисъ. Сеченовская ул. № 9. Медицинскому фельшеру Г. Есаянцу.
(հ.կ.) 327. 100—92

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են հետեւեալ հրատարակութիւնների

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթանէս, I և II հատորները . . . 1 ր. 50
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . 40
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր. 20
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մելիքթարեանի . . . 40
5) ԱՐԵՒԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . 15
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի . . . 50
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի . . . 1 ր.
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . . 40
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի . . . 40
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի . . . 35
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՇՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . . 15
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ Մ.-ի . . . 15
13) ՄԻԼՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . . . 30
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . . . 25
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՄ, Մակ. եպ. Բարխուդարեանի . . . 80
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. . . . 1 ր. 50
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլերի, թարգմ. Իս. Յարութիւնեանի. . . . 40
18) ՓԱՐԱՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի. . . . 15
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . 20
20) ՏՈՒԲ